

**ԼԻՏՏՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆ.-
 «ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅԻ
 ԵԼՈՅԹԸ ԱՅՆՔԱՆ
 ԻՍԱՍՏՈՒՆ ԷՐ»**



Հայաստանի ՄԻՂԿ-ի
 ատենապետուհի Լիտսմիլյա
 Սարգսեան

«Ամէն ինչ հոյակապ էր: Հե-
 տաքը քրուծիւնը այնքան մեծ էր,
 որ անգամ ոչ համախոհները այսօր
 դարձան համախոհ», - Հոկտեմբեր
 26-ին Ազատութեան հրապարակին
 վրայ տեղի ունեցած հանրահա-
 ւաքի մասին իր կարծիքը յայտնե-
 լով, լրագրողներուն արտայայտու-
 լեց ՄԻՂԿ ատենապետ Լիտսմիլյա
 Սարգսեան:

«Առաջին նախագահի ելոյթը
 այնքան իմաստուն էր, այնքան

Շաբ.ը էջ 4

**ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ
 ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ՝ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ**

Ուրբաթ, Հոկտեմբեր 26-ին
 Երեւանի Ազատութեան հրապար-
 ակին վրայ ընդդիմադրութեան
 կազմակերպած բազմահազարա-
 նոց հանրահաւաքի ընթացքին
 Հայաստանի առաջին նախագահ
 Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց,
 որ պիտի առաջադրէ իր
 թեկնածութիւնը՝ յառաջիկայ նա-
 խագահական ընտրութիւններուն:

«Ասածս սոսկ յայտարարու-
 թիւն չէ, այլ իմ՝ որպէս քաղաքա-
 կան գործչի, կարգավիճակի կտրուկ
 փոփոխութիւն: Հետեւաբար այ-
 սուհետեւ իմ կողմնակիցների
 նկատմամբ գործադրուած որեւէ
 բռնութիւն կամ հարկային ծառայու-
 թեան սանձազերծած որեւէ տե-
 ուր դիտուելու է որպէս քաղաքա-
 ցիների ընտրական իրաւունքի
 հանդէպ գործուած յանցաւոր խախ-
 տում», - այսպէս ըսաւ Տէր Պետրո-
 սեան:

Առաջին նախագահը իր եր-
 կու ժամ տեւած ծաւալուն ելոյթի
 ընթացքին խիստ քննադատութեան
 ենթարկեց Հայաստանի իշխանու-
 թիւններուն՝ գանոնք մեղադրելով
 կաշառառութեան, արտաքին քա-
 ղաքականութիւնը տապալելու,
 Ղարաբաղեան հարցի լուծումը
 սառեցնելու, ինչպէս նաեւ «Հոկ-
 տեմբերի 27»-ի գործը կոծկելու
 մէջ:

«Հայաստանում ներկայ իշ-
 խանական համակարգը կառուց-



Ելոյթ կ'ուրեմնայ Լեւոն Տէր-Պետրոսեան. Կողքին՝ Ստեփան Դեմիրճեան,
 Արամ Սարգսեան եւ ուրիշներ

ուած է մոնոլիտ բուրգի սկզբուն-
 քով եւ յստակ սահմանուած նուիրա-
 պետական, հիերարխիկ աստի-
 ճանակարգով», - ըսաւ ան շարու-
 նակելով. - «Բուրգի գագաթը
 հանրապետութեան նախագահ Ռո-

բերդ Քոչարեանն է: Երկրորդ
 տեղը զբաղեցնում է վարչապետ,
 ոչ հեռաւոր անցեալում պաշտպա-
 նութեան նախարար Սերժ Սարգս-

Շաբ.ը էջ 5

**Ս.Դ.Հ.Կ. 120-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ
 ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՄԵԾԱՐԱՆՔ**



Պատուոյ Գիրքը ստացողները Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան
 անդամներուն հետ

Ս.Դ. Հնչակեան Կուսակցու-
 թեան 120-ամեակի տօնակատա-
 րութիւններու ծիրէն ներս, Հոկ-
 տեմբեր 26-ի երեկոյեան, Հ.Մ.Մ.-
 ի Փաստօրինայի կեդրոնէն ներս
 տեղի ունեցաւ մեծարանքի հանդի-
 սութիւն կազմակերպութեամբ
 Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան ամերիկայի

վարիչ Մարմինի կողմէ:
 Օրուայ հանդիսավար Ընկ.
 Թովմաս Եթերեան երեկոն բաց-
 ուած յայտարարելէ ետք, ներկանե-
 րը յոտնկայս ունկնդրեցին Հայաս-
 տանի Հանրապետութեան Եւ Հնչակ-

Շաբ.ը էջ 10

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻ
 ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱՒ**

Միացեալ Նահանգներու կող-
 մէ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչ-
 ցող թիւ 106 բանաձեւի շուրջ
 քուէարկութիւնը յետաձգուեցաւ,
 երբ նախաձեռնող խումբ մը գոնկ-
 րէսականներ, նամակով մը դիմե-
 ցին Ներկայացուցիչներու Տան
 խօսնակ Նէնսի Փլոսիին՝ առաջար-
 կելով որ առայժմ յետաձգուի Ընդ-
 հանուր Ժողովին կողմէ քուէար-
 կութիւնը:

Բանաձեւի չորս գլխաւոր
 հովանաւորները՝ Ատէմ Շիֆ, Պրէտ
 Շըրմըն, Աննա Էշու եւ Ֆրէնք
 Փալոն խնդրեցին Նէնսի Փլոսիէն
 «այս պահուն չճշդել բանաձեւի
 քուէարկութեան ժամկէտ»: Նամա-
 կի տակ ստորագրողները յոյս յայտ-
 նեցին որ, այդ քուէարկութիւնը
 տեղի կ'ունենայ յառաջիկայ տարի:
 Թիւ 106 բանաձեւը Ներկայա-

ցուցիչներու Տան արտաքին յարա-
 բերութեանց յանձնաժողովին կող-
 մէ Հոկտեմբեր 10-ին հաստատուե-
 լէ ետք, Սպիտակ Տունը եւ ձորձ
 Պուշի ամբողջ վարչակազմը թրքա-
 կան սպառնալիքներուն ենթարկ-
 ուելով, մեծ ճնշումներ սկսած էին
 բանեցնել գոնկրէսականներու
 վրայ, որպէսզի չքուէարկեն Բանա-
 ձեւի օգտին:

Բանաձեւի հովանաւոր շարք
 մը գոնկրէսականներ, այդ ճնշում-
 ներու ազդեցութեան տակ, անցեալ
 շաբթուայ ընթացքին փոխեցին
 իրենց դիրքը, Բանաձեւի ճակա-
 տագիրը մասնելով անորոշութեան:

Գոնկրէսական Ատէմ Շիֆ «Լոս
 Անճըլըս Թայմզ» թերթին յայտ-
 նեց, որ իրենք Բանաձեւը քուէար-
 կութեան պիտի չդնեն, մինչեւ որ,
 վստահ չըլլան յաջողութեան:



**ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 120-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**
 Կիրակի, 4 Նոյեմբեր, 2007, երեկոյան ժամը 6:00 ին
 Glendale High School-ի սրահին մէջ - 1440 East Broadway, Glendale, CA 91205
 Մուտքը Ազատ

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՍԱՍՈՒԼ

ԳԱԼԴ ԲԱՐԻ, ՆՈՐ ՏԱՐԻ

Այն, որ Հայաստանում գների բարձրացման այս ալիքը գալիք թանկացումների միայն սկիզբն է, հանրութիւնն արդէն ողնաշարով է զգում:

Որքա՞ն է հիմնաւոր այդ գագոցողութիւնը: Պէտք է նշել, որ սա ոչ միայն գագոցողութիւն է, այլև փաստ, եւ նոյնիսկ կարելի է ոչ միայն պնդել, որ գները Հայաստանում շատ շուտով աճելու են, այլ նաեւ մտաւոր հաշուարկել թանկացման չափը: Այսպիսով, կարող էր անգամ ՀՀ պետական մարմինների հաշուարկներով, թանկացել է 80 տոկոսով՝ այն դէպքում, երբ միջազգային շուկայում դրա թանկացումը ընդամենը 17 տոկոս է: Սրանով փորձ է արւում ակնարկել, որ եթէ կարող է Հայաստանում թանկանար 17-20 տոկոսով, ապա դա կը լինէր նորմալ, եւ դա կարելի էր գրանցել որպէս միջազգային շուկայում այդ ապրանքատեսակի թանկացման ուղղակի արձագանք ՀՀ ներքին շուկայում: Բայց սա էլ է հեքիաթ: Խնդիրն այն է, որ այդ պաշտօնական մարմինները իրենց հաշուարկներում «մոռացել են» մի հական դետալ: Խնդիրն այն է, որ միջազգային շուկայում, օրինակ, կարագի գնի աճը հաշուարկւում է դոլարով կամ եւրոյով, իսկ Հայաստանում՝ դրամով: Սա հական հանգամանք է՝ չափազանց էական: Միջազգային եւ հայաստանեան շուկաներում կարագի գների բարձրացման համեմատութիւնը կատարւում է այս եւ անցեալ տարուայ կտրուածքներով: Անցած տարի այս ժամանակ, ըստ ՀՀ կենտրոնական բանկի պաշտօնական տեղեկատուութեան, դոլարը

ուարին աւարտւում է սպառողներին մատակարարուող գազի սակագնի մասնակի փոխհատուցման համար նախանշուած գումարը, եւ արդէն մարտ ամսից այդ սուբսիդը աւարտւում էր դադարի: Խոշոր սպառողների համար գազը կը թանկանայ 52 դոլարով կամ մօտ 50 տոկոսով, իսկ բնակչութեան համար կը թանկանայ 25 հազ. դրամով, այսինքն՝ մօտ 25%-ով: Ինչի՞ սա կը հանգեցնի: Ի՞նչ էք կարծում, որքա՞ն կը թանկացնեն իրենց ապրանքը գազայնացմանը, որտեղ լիցքաւորւում են մեր երթուղային տաքիւնները եւ աւտոբուսները: Իհարկէ, ուղիղ 50%-ով: Իսկ դրա արդիւնքում որքա՞ն կը թանկանայ երթուղայիների սահմանած ուղեվարձը: Էլի 50%-ով եւ կը կազմի 150 դրամ: Իսկ տրանսպորտային փոխադրումների գների աճից աւելի մեծ խթան դժուար է գտնել: Սա արդէն, ինչպէս սիրում են ասել պետական պաշտօնեաները, թողնելու է մուտիպլիկատիւ էֆեկտ: Այսինքն՝ մարդիկ աւելի շատ են փող ծախսելու տրանսպորտի վրայ, մեծանալու են նրանց կենցաղային ծախսերը, քանի որ սննդամթերքի եւ կենցաղային բոլոր ապրանքների գնի մէջ կայ տրանսպորտային բաղադրիչ, որը եւս մեծանալու է: Սա բերելու է նրան, որ գործատուները ստիպուած պէտք է բարձրացնեն իրենց աշխատողների աշխատավարձերը: Սա եւս թանկացնելու է այդ գործատու ընկերութիւնների արտադրանքի եւ ծառայութիւնների գները: Սա էլ լրացուցիչ գնաճային մեծ ճնշում է առջացնելու, ինչը մի քանի փուլով թանկացումներ է ենթադրում: Տնտե-

Ո՞Ր ՎԱՅԱՍԱՆԻ ԱՆՈՒՆԻՑ ԷՐ ԴԻՍՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

Ֆրանսիայում ուսանող հայաստանցի երիտասարդների հետ հանդիպման ժամանակ վարչապետ Սերժ Սարգսեանը նրանց ասում էր, թէ իրենք պէտք են Հայաստանին, որ իրենք պէտք է վերադառնան, որ Հայաստանը սպասում է նրանց, ունի նրանց կարիքը, որ իրենք՝ ինչու ոչ, պէտք է աշխատեն նաեւ կառավարութիւնում:

Դժուար է ասել, թէ այդ խօսքերը լսելուց յետոյ քանի երիտասարդ կորցրեց քունն ու դադարը եւ սկսեց անհամբեր սպասել, թէ երբ պէտք է ուսումն աւարտի ու գալ Հայաստան: Դժուար է նաեւ պատկերացնել, թէ ինչ են անելու Հայաստանում այդ երիտասարդները: Եթէ գալու են ու բացելու են մի որեւէ կուսակցութիւն, որը կը յայտարարեն միակը կամ եզակին քաղաքական դաշտում, բայց փաստացի ընդամենը կ'ապահովեն ներկայիս քաղաքական որակի արժանի սերնդափոխութիւնը, ապա ինչ խօսք, երիտասարդներն այստեղ կը լինեն պահանջուած:

Բայց ինչի՞րը բոլորովին այլ է: Խնդիրն այն է, թէ Հայաստանում սպասուած լինելու մասին խօսքով այդ երիտասարդներին դիմելիս, ինչ նկատի ունէր Սերժ Սարգսեանը Հայաստան ասելով: Եթէ Հայաստանը այն երկիրն է, ուր վարչապետ է Սերժ Սարգսեանը եւ ուր պատրաստուած է դառնալ նախագահ, ապա հազիւ թէ արտասահմանում ուսանող հայաստանցի երիտասարդները լինեն այդքան կարճամիտ ու հաւատան, որ այդ երկրում իրենց գիտելիքները պէտք են ինչ որ մէկին:

Արդեօք Սերժ Սարգսեանը կարող է գործնականում ցոյց տալ, որ այդ երկիրն ունի բանիմաց եւ կիրթ երիտասարդութեան կարիք: Այսինքն կարիքն ունի, դա պարզ է բոլորին, բայց արդեօք այդ երկրում սպասուած են այդպիսի երիտասարդները:

Եթէ Հայաստան գան բանիմաց երիտասարդներ եւ փորձեն աշխատել, այդ դէպքում ինչ են անելու մականունաւոր պատգամաւորների, թաղապետների, նախարարների, նրանց հարազատ բարեկամների, ծանօթների, մանկութեան ու պատանեկութեան ընկերների, թիկնապահների գաւակներն ու փեսաները, որոնք այսօր աջ ու ձախ ասպատակում են Երեւանը, ջճանաչելով որեւէ օրէնք, որեւէ կարգ, բացի սեփական ցանկութիւններից:

Արդեօք այդ երիտասարդներին սպասում են այս երիտասարդների հայրերը, քեռիները, հօրեղբայրները, որոնք բաժանել են երկիրն իրար մէջ եւ որոշել են մնացեալի ապրելու սահմանները: Նրանք այդ սահմաններում տեղ թողել են արդեօք բանիմաց ու կիրթ, երոպական կրթութիւն ստացած երիտասարդների համար: Եւ եթէ թողել են, ապա շատ կարեւոր է, թէ ինչ տեղ են թողել, որովհետեւ ստրուկի, ծառայի, ճորտի տեղն էլ արեւի տակ՝ տեղ է: Հայաստանն իհարկէ կարիք ունի բանիմաց ու կրթուած երիտասարդների, բայց ինչ ասել է Հայաստան: Ով ինչ է հասկանում Հայաստան ասելով, ում համար ինչն է Հայաստանը: Մէկի համար Հայաստանն իշխանութիւնն է, այդ իշխանութեան տուած բոլոր արտօնութիւն-

ները, հարստութիւնը, բարեկեցութիւնը, հողը ջուրը, հանքը, Սեւանի գաւթած ափն ու Ծաղկաձորի նուաճած անտառները, միւսի համար Հայաստանը օրէցօր բարձրացող գներն են, օրէցօր ընկնող բարքերն ու արժէքները, ամէն օր ոտնահարուող արժանապատուութիւնը, ծեծուող խաղաղ ցուցարարները, անպատիժ ու ցինիկ ոստիկանները, սափրագլուխները: Հիմա, ո՞ր Հայաստանին են պէտք այդ բանիմաց ու կիրթ երիտասարդները:

Ո՞ր Հայաստանի անունից էր դիմում երիտասարդներին Սերժ Սարգսեանը: Արդեօք նա կարող է ապահովել այդ երիտասարդներին այն Հայաստանի յարձակումներից, որ տեղի են ունենում այս երկրում ցանկացած պարկեշտ, օրինապահ, առաքինի անձի հանդէպ, ով չի համաձայնում ամենօրեայ նուստացմանը, բայց միեւնոյն ժամանակ չի էլ պատրաստուում նուստացնել որեւէ մէկին: Եթէ կարող է ապահովել այդ երիտասարդներին, ապա ինչու չի ապահովում այն հարիւր հազարաւոր, քաղաքացիներին, որոնք արդեն Հայաստանում են եւ չեն ունեցել Հայաստանից դուրս ոչ ապրելու, եւ ոչ էլ սովորելու հնարաւարութիւն:

Եթէ չի ապահովում այդ քաղաքացիների արժանապատիւ ապրելու իրաւունքը, ապա երիտասարդ ուսանողների հետ հանդիպումն ընդամենը քաղաքական տեխնոլոգիա է, որ իհարկէ կարող է ունենալ իր ազդեցութիւնը տուեալ գործչի վրայ, բայց երկրի կեանքի վրայ՝ երբեք:

ՅԱԿՈՐ ԲԱԴԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

Գների կայունութիւնը պահպանելու միակ միջոցը, որը մինչ օրս լաւ թէ վատ կիրառուել է Հայաստանում, դրամի արժեւորումն է: Ընդամենը երեք տարում դրամի արժեւորումը Հայաստանում կազմել է մօտ 70%: Սա, իհարկէ, կործանարար եղաւ մեր արտահանողների համար, սակայն գների աճի կանխման տեսակէտից արեց իր գործը

ՀՀ-ում արժեք 382 դրամ, հիմա՝ 327 դրամ: Այսինքն՝ այս 1 տարուայ ընթացքում դոլարը Հայաստանում արժեզրկուել է 16,8 տոկոսով: Եթէ առաջնորդուենք կարագի միջազգային գնի եւ հայաստանեան գնի փոխկապակցուածութեան սկզբունքով, ապա կարող ենք անցած 1 տարուայ ընթացքում պէտք է թանկանար 60 լումայով, ոչ աւելին: Այլ կերպ ասած, կարող է ՀՀ-ում թանկացել է ոչ թէ 80 տոկոսով, այլ գրեթէ կրկնակի: Նոյնատիպ հաշուարկներ կարելի է անել նաեւ, օրինակ, ձէթի պարագայում, եւ էլի կը ստացուի մօտաւորապէս կրկնակի թանկացում: Մի խօսքով, այսօր արդէն պարզ է, որ Հայաստանում թանկացումները պէտք է հաշուել ոչ թէ տոկոսներով, այլ անգամներով՝ առնուազն երկու անգամ: Սա է թանկացման այն չափը, որ պէտք է սպասել առաջիկայում: Խնդիրը միայն խթանի մէջ է: Այսինքն՝ ինչպէս կարագի ու ձէթի պարագայում, դրանց հայաստանեան գների կրկնակի աճի համար խթան հանդիսացաւ միջազգային շուկայում գների թուլացեալ աճը, ապա մնացած ապրանքների թանկացման համար էլ խթան է պէտք: Եւ հեռուն պէտք չէ գնալ՝ այդ խթանը գտնելու համար: Ինչպէս արդէն նշել ենք, գալիք փետր-

սագիտութեան մէջ կան բանաձեւեր, որոնցով կարելի է մօտաւոր գնահատել գների աճի սպասուող մակարդակները: Եւ այդ բանաձեւերով պէտք է սպասել մի 50-60 տոկոսի թանկացումներ: Սակայն Հայաստանի պարագայում որեւէ բանաձեւ աշխատել չի կարող, եւ գների բարձրացումը իրականում կը լինի առնուազն կրկնակի: Եւ դրանից խուսափելու ձեւ գտնէ առայժմ չի նշմարուում: Այստեղ յատուկ պէտք է նշել, որ գների կայունութիւնը պահպանելու միակ միջոցը, որը մինչ օրս լաւ թէ վատ կիրառուել է Հայաստանում, դրամի արժեւորումն է: Ընդամենը երեք տարում դրամի արժեւորումը Հայաստանում կազմել է մօտ 70%: Սա, իհարկէ, կործանարար եղաւ մեր արտահանողների համար, սակայն գների աճի կանխման տեսակէտից արեց իր գործը: Բայց դրամի եւս մի 10-15% արժեզրկումը արդէն անդառնալի հետեւանքներ կը թողնի, եւ այս դրամի արժեւորումը, որպէս գների աճը կանխող ռեսուրս, այլեւս սպառուած է: Այնպէս որ, յաջորդ տարուայ սկիզբը մեզ՝ հայաստանցիներին, մեծ անակնկալներ է խոստանում:

ՀԱՅԿ ԳԵՈՐԳԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՏԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՔԱՅԼԵՐԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑ 5-Ի ՆԿԱՏՄԱՍԲ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՈՒԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՑ»:
Հոկտեմբեր 30-ի առաջօրեան կենտրոն եւ Նորք-Մարաշի ոստիկանութեան քննչական խումբը մեղադրանք է առաջադրել Հոկտեմբերի 23-ի խաղաղ քայլերի մասնակիցներին 5-ի նկատմամբ, ովքեր մինչ օրս կասկածեալի կարգավիճակում էին՝ «Այլընտրանք» նախաձեռնութեան խորհրդի անդամ, «Հայկական ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի, նախաձեռնութեան անդամներ Պետրոս Մակեանի ու նրա երկու որդիները, «Չորրորդ Իշխանութիւն» թերթի գլխաւոր խմբագիր Շողեր Մաթեոսեանի:



«Հայկական ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեան

Շողեր Մաթեոսեանի շահերի պաշտպան Յովիկ Արսէնեանը «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց, որ իր պաշտպանեալի նկատմամբ մեղադրանքը առաջադրուել է Քրէական օրէնսգրքի 316 յօդուածի առաջին մասով՝ «իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու» համար: Նշուած յօդուածով նախատեսուած նուազագոյն պատիժը տուգանքն է, առաւելագոյնը՝ 5 տարուայ ազատազրկումը:

Բոլոր 5-ի նկատմամբ էլ խափանման միջոց է ընտրուել բացառկայելու ստորագրութիւնը:

Պետրոս Մակեանը եւ նրա որդիները այս գործով կասկածեալի կարգավիճակում են, թէեւ Տիգրան եւ Կարէն Մակեանները տուժել են Հոկտեմբերի 23-ին տե-

ղի ունեցած միջոցաւար արդիւնքում: Մասնաւորապէս, Կարէնի աչքերը վնասուել են ոստիկանների օգտագործած արցունքաբեր գազից, ինչը հաստատուել է դատաբժշկական փորձաքննութեամբ, իսկ Տիգրանն արդէն երկու օր է հիւանդանոցում է՝ գլխին ստացած հարուածների պատճառով:

«Չորրորդ Իշխանութիւն» թերթի թղթակից, Ազգային ժողովրդավարական միութեան մամուլի պատասխանատու Գոհար Վեգիբեանը, ով Հոկտեմբերի 23-ին իր մասնագիտական պարտականութիւնները կատարելիս ենթարկուել էր բռնութիւնների, երկու օր է հրաւիրուած է հարցաքննութեան, սակայն՝ ոչ որպէս տուժող:

«ԽՈՐ ՎԻՐԱՊԸ ՓԼՈՒԵՑ ՀԱՐՍԻ ՌԻ ՓԵՍԱՅԻ ԳԼԽԻՆ»

Արդէն մի քանի օր է, ինչ խոր վիրապի քանդուած պարսպի քարերը դէպի խորանը տանող ճանապարհը փակել են, եւ պահակները ստիպուած են լինում մի փոքրիկ արահետ բացել, որպէսզի այցելուները կարողանան վերել բարձրանալ:

Խոր վիրապի պահակ Վիգէնը պատմում է, որ մի քանի օր առաջ պակասաբազմութիւն էր եկեղեցում եւ արարողութիւնից յետոյ, երբ հիւրերը արդէն իջնում էին, իրենք մեծ դղրդիւն լսեցին եւ անմիջապէս դուրս թռան եկեղեցուց:

«Առաջին բանը, որ մտքովս անցաւ, թէ երկրաշարժն է, յետոյ տեսանք, որ պարսպի տոննայանոց քարերն են քանդուել եւ թափուել ներքեւ՝ փակելով ողջ ճանապարհը, ներքեւ էջինք տեսնում եւ մտածում էինք՝ խոր վիրապը փլուցն հարսի ու փեսայի գլխին», - «Ա.1+»-ին պատմեց Վիգէնը եւ ասաց, որ բարեբախտաբար վիրաւորներ չկային, քարերը փլուել էին այն ժամանակ, երբ հարսանիքի հիւրերը համարեայներքեւում էին:

Նա նաեւ պատմեց, որ պարսպի մօտ 3-4 մեթրանոց ճաքը արդէն մի քանի տարի է, ինչ կայ եւ այդքան էլ անակնկալ չէր տեղի ունեցածը: «Մի օր չէ, մի օր հաստատ փլուելու էր: Լաւ է, որ գոհեր չեղան», - ասաց նա:

Նշենք, որ մեր այնտեղ գտնուելու ժամանակ էլ պարսպից շարունակ փոքր քարեր էին պոկուում եւ թափուում ներքեւ, ինչը վերել բարձրանալը մի տեսակ էքստրիմալ էր դարձնում: Պահակը պատմեց, որ չնայած վիճակը վտանգաւոր է, սակայն խոր վիրապ մարդկանց հոսքը չի դադարում, իսկ

իրենց խօսք են տուել, որ մօտ ապագայում անպայման կ'ամրացուի պարիսպը, եւ կը լուծուի այս խնդիրը:

«Ա.1+»-ը Յուշարձանների պահպանութեան կոմիտէից հետաքրքրուեց խոր վիրապի ճակատագրով եւ կոմիտէի ղեկավար Արտյոմ Գրիգորեանը յայտնեց, որ տեղեակ է խոր վիրապում տեղի ունեցածից, սակայն խոր վիրապի պարագայում քայլ պէտք է ձեռնարկի էջմիածնի առաջնորդարանը, որովհետեւ այն Հայ Առաքելական եկեղեցու սեփականութիւնն է:

«Խոր վիրապի պարիսպը բազմաշերտ է, առաջինը 13-14-րդ դարի է, աւելի վերին շերտը 17-18-րդ դարի է, եւ ողջ պարիսպը վթարային վիճակում է 2000 թուականից, երբ ճաքը սկսեց աստիճանաբար մեծանալ», - ասաց նա:

Արտյոմ Գրիգորեանը նաեւ յայտնեց, որ պարսպի վերականգնման համար յատուկ տեխնիկայ է պէտք եւ դրանք ահռելի ծախսեր են: Նա յոյս ունի, որ էջմիածնից մի բան կը ձեռնարկեն:

Իսկ մինչեւ էջմիածնի «մի բան ձեռնարկելը» խոր վիրապի պահակները ամէն օր ստիպուած են լինում քարերը մի կողմ հրել ու արահետ բացել վերել բարձրացողների համար:

«Վախն էլ սրմանբուծմ է, թէ յանկարծ պոկուող քարերը մէկի գլխին չընկնեն», - ասում է Վիգէնը: Նշենք, որ ըստ Արտյոմ Գրիգորեանի՝ այսօր Հայաստանում շատ պատմամշակութային յուշարձաններ վթարային վիճակում են եւ շուտափոյթ պէտք է դրանց վերականգնումը նախաձեռնել, քանի որ սա, իրօք, լուրջ խնդիր է:

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ.

«ԳՈՒՆԱԻՈՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՉԵՆ ՈՒՆԵՆԱՅ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՑ»:
Հայաստանի խորհրդարանի խօսնակ, իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Տիգրան Թորոսեանի պնդմամբ՝ «ՀՀ-ի պէս ազդեցիկ կուսակցութիւնը իր մարտավարութիւնը փոխելու կարիք չունի»՝ անկախ նրանից, թէ ովքեր կ'առաջադրուեն նախագահի թեկնածու:

«Անիմատ կը լինի, եթէ նախագահական ընտրութիւններին մասնակցող ամենաազդեցիկ քաղաքական ուժը այս կամ այն այլ թեկնածուի մասնակցութեան կամ չմասնակցութեան հետ կապուած իր մօտեցումներում փոփոխութիւններ անի», - ի պատասխան Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ իր թեկնածութիւնն առաջադրելու մասին յայտարարութեանը վերաբերող հարցին ասաց Թորոսեանը:

Ազգային ժողովի շէնքում պատասխանելով լրագրողների հարցերին՝ Տիգրան Թորոսեանը, խօսելով Ուրբաթ օրը կայացած հանրահա-



Խորհրդարանի նախագահ Տիգրան Թորոսեան

լաքի մասին, ասաց. - «Շատ բան էր արուած, որ շատ ժողովուրդ հաւաքուի: Եւ չեմ կարծում, որ սպասելիքները հաստատուեցին»:

«Գունաւոր լեղափոխութիւններ, ես կարծում եմ, Հայաստանում տեղի չեն ունենայ, որովհետեւ մեր ժողովուրդը հիւսնալի տեսնում է, որ գունաւոր լեղափոխութիւններից ոչ մի լաւ բան չի ծնուում», - յաւելեց Թորոսեանը:

ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՅԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՑ»:
Ընդդիմութիւնը շարունակելու է ժողովրդի հետ հանդիպումները, սակայն յաջորդ հանդիպման օրն արդէն Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը պէտք է որոշի՝ կոնկրետ որոշում դեռեւս չկայ: «Ազատութիւն» ռադիոկայանին այդ մասին ասաց «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի նախագահ Արամ Սարգսեանը:

Սարգսեանի համոզմամբ՝ այսպիսի իրավիճակն անգամ իշխանութեանը անհանգստանալու տեղիք պէտք է տայ, քանի որ, ինչպէս վստահեցրեց նա, իշխանական համակարգից դէպի ընդդիմութիւն արդէն հոսք կայ:

«Այս իշխանութիւններին ցանկապէս մարդիկ կան, որոնց հետ ես արդէն ամիսուկէս է հանդիպում եմ», - ասաց «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ՝ հաստատելով, որ այդ մարդիկ բարձրաստիճան պաշտօնեաներ են. - «Իհարկէ, բարձրաստիճան պաշտօնեաներ, իհարկէ, Հանրապետական կուսակցութեան քաղաքական դէմքեր»:

«Երբ մարդը իրավիճակի ճիշդ գնահատականներ ու լուծումներ

բանալիներ է տալիս՝ խելօք մարդիկ մտածում են: Ես այն կարծիքին եմ, որ Հայաստանում խելօք մարդիկ շատ-շատ են՝ այդպիսի մարդիկ կան թէ՛ հանրապետականների մէջ, թէ՛ մնացած կուսակցութեան մէջ, թէ՛ մնացած կուսակցութիւններում: Այնպէս որ, սա բնական գործընթաց է, այն սկսուել է», - ընդգծեց Արամ Սարգսեանը:

Այդ գործընթացը, ըստ նրա, «մէկական անհատներով է հիմա երեւում». - «Ամբողջ հասարակութիւնը տեսաւ, որ յայտնի գործարարներից մէկը ուղղակի կանգնեց ու ասաց՝ «Ես կանգնում եմ ընդդիմութեան կողքին»: Հայաստանում գործող հեռուստատեսութիւններից մէկը կանգնեց ու ասաց՝ «Ես էլ ձեր հրահանգով չեմ աշխատելու, աշխատելու եմ ազատ»: Դատաւորներից մէկը կանգնեց ու ասաց՝ «Ձեր հրահանգով չեմ դատելու» ինչ ուզում է լինի»:

«Այս մէկ-մէկերին բոլորը գիտէք: Բայց ինչքան այդպիսի մէկեր կան ընդերքում, որոնց դեռ չգիտէք, որոնք դեռ լինելու են: Դա հրաշալի հասկանում է նաեւ Ռոբերտ Քոչարեանը», - ամփոփեց «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդը:

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՆՓՈՓՈՒՄ Է

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:
Վազգէն Մանուկեանը անկախ ամէն ինչից առաջադրուելու է 2008թ Նախագահի ընտրութիւններում: Այսինքն՝ նրա մտադրութիւնը մնացել է նոյնը Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ առաջադրուելու յայտարարութիւնից յետոյ: Յիշեցնենք, որ մինչ իր այս յայտարարութիւնը, ՀՀ առաջին նախագահը տարբեր քաղաքական ուժերի հետ հանդիպումների շարքում հանդիպել էր նաեւ նրան:

«Մեր կուսակցութիւնը համաձայնութիւն է տուել եւ ես դնելու եմ իմ թեկնածութիւնը: Ով է դնելու, ով չի դնելու, դա առանձին հարց է», - «Ա.1+»-ին ասաց Վազգէն Մանուկեանը:

Ինչպիսի՞ մրցակցութիւն է ակնկալուում այդ պարագայում: «Մրցակցութիւնը լաւ կը լինի, թէ վատ, հիմա դրա մասին չեմ ուզում խօսել: Բազմաթիւ գործեր կան անելու: Ինչ վերաբերում է նրա դնել, չդնելուն, ապա նա բացի սովորական թեկնածու լինելուց, նաեւ առաջին նախագահ է եղել, եւ իր օրօք Հայաստանը ինչ-որ վիճակում է եղել: Դա առանձին խօսակցութիւն է եղել, որ հիմա չեմ ուզենայ խօսել, բայց մի օր դրա մասին էլ կը խօսենք», - նշեց ԱԺՄ առաջնորդը:

Վազգէն Մանուկեանը բացառում է, որ Նախագահի ընտրութիւնների որեւէ փուլում կը սատարի Լեւոն Տէր-Պետրոսեանին:

ԼՈՒՐԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ԳԻՒՄՐԻԻ ԳԱԼԱ ՅԵՌՈՒՄՍԱԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայաստանի Հանրապետության Հարկային պետական ծառայության (ՀՀ ՀՊՄ) օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցները Հոկտեմբեր 31-ին կրկին եկել էին Գիւմրիի ԳԱԼԱ հեռուստաընկերության՝ շարունակելու Հոկտեմբեր 29-ին սկսած ստուգումները:

Հեռուստաընկերությունում ստուգումները սկսվեցին այն բանից յետո, երբ Հոկտեմբերի 14-ին ԳԱԼԱ-ն ամբողջովին փակվեց հեռարձակիչի հարկային առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Սեպտեմբերի 21-ի ելույթը:

ԳԱԼԱ-ի սեփականատէր Վահան Խաչատրեանը օպերատիվորեն անձր հաստատող փաստաթղթեր պահանջեց, բայց, օպերատիվ հետախուզություն վարչության առաջին բաժնի պետ Գագիկ Օհանեանը չունեի համապատասխան վկայական: Ի վերջո, Գագիկ Օհանեանը թողեց ԳԱԼԱ հեռուստաընկերության տարածքը, ենթադրաբար, մեկնեց Երեւան՝ վկայականը բերելու: Հարկային երկու օպերատիվները շարունակեցին ստուգումները:

ման աշխատանքները: Աւելի ուշ նրանց միացան գիւմրեցի գործընկերները:

«Ես կ'ուզեի, որ դուք մի հատ տեղեկանք տաք կամ բանաւոր ասէք՝ մինչ այս պահը դուք ինչ-որ խախտումներ արձանագրե՞լ էք այս կառույցում», - մինչև ստուգումները սկսվելը հարց ուղղեց Վահան Խաչատրեանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք մտավախութիւն չունի, որ իր գործողութիւնները աւելի խիստ ստուգում անցկացնելու կը դրդեն հարկային օպերատիւներին, Վահան Խաչատրեանը պատասխանեց. - «Ես չեմ վախեցել ոչ մէկից, հիմա չեմ վախենում ոչ մէկից եւ ոչ մի բանից, ապագայում չեմ պատրաստուում վախենալ ոչ մի բանից եւ ոչ մէկից»:

Նա յաւելեց նաեւ, որ իրենց դէմ սանկցիաները տեղափոխուել են նաեւ տնտեսական դաշտ. - «Մօտ երեք անգամ պակասել են մեր գովազդատուները: Երեւի մօտ օրերս մնացածներն էլ կը հրաժարուեն գովազդ տրամադրելուց»:

ՌՈՒՄԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԸ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Ե ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ռոբերտ Քոչարեանը Չորեքշաբթի, Հոկտեմբեր 31-ին արձագանքել է անցած նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթին, որում վերջինս խիստ քննադատութեան էր ենթարկել ներկայ իշխանութիւններին:

«Ցաւալի է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը չարութեամբ լցուած է փորձում վերադառնալ քաղաքականութիւն: Հենց այդ շարութիւնը ժամանակին կործանեց ՀՀԾ-ին», - լրագրողներին ասաց Ռոբերտ Քոչարեանը: - «Բովանդակութեան վերաբերեալ՝ ամբողջ միտքը հետեւեալն էր, որ՝ «մեր ժամանակ լաւ էր, հիմա վատ է»:

«Հայաստանում մի քանի տարուայ ընթացքում ուղղակի աւերուեց արդիւնաբերութիւնը: Այսօր կարելի է պարզ ասել հետեւե-

աւել. ստացել են, ըստ հուլիսեան, նորմալ իրավիճակ, յանձնել են՝ ինձ կոնկրետ, 1998 թուականին, աւերուած տնտեսութիւն ունեցող երկիր, մի երկիր, որը, կրկնում եմ, դասակարգում էր միջազգային կառույցների կողմից, ինտիտուտների կողմից իբրեւ աշխարհի ամէնից աղքատ երկրների շարքում գտնուող պետութիւն», - ասաց Ռոբերտ Քոչարեանը: - «Հիմա պէտք է համեմատենք՝ ինչ վիճակ ենք ունեցել 1997 թուականին, եւ ինչ վիճակ ունենք այսօր, երբ այսօրուայ բիւջին նոյնն է, մի քիչ աւելի մեծ, քան այն ժամանակուայ համախառն ներքին արդիւնքը»:

«Կարծում եմ, ուղղակի, տնտեսութեան մասին պէտք է խօսեն մարդիկ, որոնք գոնէ մի քիչ հասկանում են առարկան», - եզրափակեց Ռոբերտ Քոչարեանը:

ԵԱՅԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՅՈՒՄՈՎ Է, ՈՐ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՉԵՆ ՏԱՅ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՅԿ) ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի (ԺՀՄԻԳ) խօսնակը յուսով է, որ ԵԱՅԿ անդամ մի շարք երկրներ Մարդիկուժ կայանալիք ԵԱՅԿ-ի նախարարների խորհրդի նիստում հաւանութիւն չեն տայ նախկին խորհրդային երկրներում ընտրական դիտորդական առաքելութիւնների գործունէութիւնը սահմանափակելուն վերաբերող Ռուսաստանի առաջարկին:

«Լաւ առաջարկ է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռուստազրոյցում ասաց ԵԱՅԿ-ի ԺՀՄԻԳ-ի խօսնակ Ուրդուր Գուննարսդոթիրը: - «Ես իրականում չեմ տեսնում, թէ ինչու պէտք է սահմանափակուի դիտորդների քանակը, ինչու պէտք է սահմանափակուի դիտարկումների մասին կարծիք յայտնելու հնարաւորու-

թիւնը»:
Այդ փաստաթուղթը, ըստ «Նիւ Եորք Թայմզ» թերթի կայքէջի, ստորագրել են նաեւ Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը եւ Ուզբեկստանը:

Դա հաստատեց նաեւ Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան պետ Վլադիմիր Կարապետեանը՝ յաւելելով, որ քննարկուել են ԵԱՅԿ-ի բարեփոխումներին առնչուող բոլոր հարցերը:

Կոնկրետ այդ առաջարկի մասին Կարապետեանը ասաց. - «Մենք այդ հարցը դիտարկում ենք Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութիւնում ընթացող բարեփոխումների լոյսի ներքոյ: Հայաստանը ակտիւ ներգրաւուած է բարեփոխումների գործընթացում եւ կարեւորում է կազմակերպութեան առաւել ներկայացուցչական, թափանցիկ եւ բոլորի համար հաւա-

ՅՈՎԻԿ ԱՐՐԱՅԱՍԵԱՆԸ ՉԻ ՀԱՒԱՏՈՒՄ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:
ՀՀ փոխ վարչապետ Յովիկ Աբրահամեանը գտնում է, որ Հոկտեմբերի 27-ը բացառապէս է: Իրօք ինքը կարծում է, որ գործն ամբողջութեամբ բացառապէս է՝ մեր հարցին Յովիկ Աբրահամեանը հարցով պատասխանեց. «Իսկ ձեր կարծիքով չի՞ բացառապէս մարդիկ նստած չե՞ն հիմա, ես իրաւունք չունեմ չհաւատալու, չվստահելու իրաւապահ մարմինների, դատարանի որոշմանը: Իմ կարծիքով, բոլորը էլ պիտի հաւատաք, ես էլ եմ հաւատում»:

Ապա նրա մօտ ցանկութիւն առաջացաւ դատապարտելու յանցագործութիւնը. «Ուզում եմ դատապարտել 27-ի ոճրագործութիւնը, դարեւրով մեր ժողովուրդը պէտք է յիշի այդ ոճրագործութիւնը, եւ իհարկէ մենք չենք կարող մոռանալ Վազգէն Սարգսեանին, մեր սպարապետին եւ մեր միւս գործընկերներին. Իրօք, դատապարտելի արարմունք է եղել եւ ամբողջ կեանքս, ես կոնկրետ, որպէս Վազգէն Սարգսեանի մօտիկ քաղաքական գործիչ, ես ամբողջ կեանքս յիշելու եմ իրեն, Դեմիճեանին ու միւս մեր գործընկերներին»:

Կազմակերպիչների վերաբերեալ հարցերից պարոն Աբրահամեանը փորձում էր խուսափել. «Ես կազմակերպիչների մասին որեւէ տեղեկատուութիւն չունեմ»:
Առանցքային վկաների մասին էլ նա տեղեկութիւն չունէր, նրանց, որոնք չեն հարցաքննուել դատարանում եւ այժմ ԱՄՆ-ում են եւ մտադրութիւն էլ չունեն վերադառնալու:

Սակայն երբ հարցրինք, թէ ինքը բաւարարուած է գործի քննութեամբ եւ յանցագործների պատիժով, թէ գործի բացառապէս պահանջատէր է լինելու, Յովիկ Աբրահամեանը պատասխանեց. «Ես մտածում եմ, որ այս գործն այն գործն է, որ մինչեւ վերջ իրաւապահ մարմինները պէտք է հետամուտ լինեն, իսկ եթէ կան մասեր, որոնց հետամուտ չեն եղել, իրօք դատապարտելի է. բաւարարուած էք»:

Ի դէպ, Յովիկ Աբրահամեանի եւ «Ա1+»-ի ու «Ազատութեան»



ՀՀ փոխ վարչապետ Յովիկ Աբրահամեան

լրագրողների միջեւ հետաքրքիր հարց ու պատասխան ծաւալուեց Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթի շուրջ:

«-Ինչպէ՞ս էք վերաբերում Լեւոն Տէր-Պետրոսեանի յայտարարութիւններին՝ նաեւ ձեր կարողութիւնների վերաբերեալ:

-Իմ կարողութիւնները օրէնքով սահմանուած կարգով որտեղ որ պէտք է՝ յայտարարագրուած է: Կարող էք գնալ, ծանօթանալ:

-Դատի՞ կը տաք Առաջին նախագահին:

-Ինչի՞ համար:

-Եթէ չունէք այնպիսի կարողութիւն, ինչի մասին խօսեց Լեւոն Տէր-Պետրոսեանը:

-Ի՞նչ է ասել:

-Ներկայացրել է կոռուպցիոն համակարգի բուրգը, որի գագաթում Ռոբերտ Քոչարեանն է, յետոյ Սերժ Սարգսեանն ու դուք:

-Ի՞նչն է ասել: Չեմ հաւատում:

-Կարդացէք: Թերթերում տպագրուել է:

-Կը կարդամ, յետոյ կը պատասխանեմ:

-Լաւ, այն, ինչ յայտարարագրել էք, աշխատավարձով էք ձեռք բերել:

-Բիզնեսով եմ ձեռք բերել, յայտարարագրում նշուում է, թէ որտեղից են առաջացել եկամուտները: Ու բացի այդ, այսօր էլ օրը չի, նման հարցեր տալու օրը չի, մի քիչ բարոյական հարցեր պէտք է տաք», - վերջում խորհուրդ տուեց Յովիկ Աբրահամեանը:

ԼԻՏՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆ

Մարտնաւազուած է 1-էն

մութ հարցերի պատասխաններ ստացան մարդիկ, որ կարծում են՝ մեր համախոհները այսօր կրկնապատկուեցին, վաղը եռապատկուեն», - յայտնեց Հնչակեան կուսակցութեան ատենապետը ու աւելցուց որ, իշխանութիւնները հիմա հոգեվարքի մէջ են, քանի որ դարձեալ 1991 թուականի արխիւները սկսած են հանել: «Ոչինչ սար լինելը»:

Հարցին, թէ արդեօք դիտորդական առաքելութիւնների գործունէութեան սահմանափակումը կարող է նպաստել դրան, Կարապետեանը արձագանքեց. - «Կարծում եմ, դա քննարկման առարկայ կը դառնայ կազմակերպութիւնում առաջիկայ հանդիպումների ընթացքում, եւ Հայաստանը կը ներկայացնի իր մօտեցումները այս հարցի վերաբերեալ»:

«Հայաստանը վերապահում է իրեն իրաւունք հանդէս գալու մեր սեփական մօտեցումներով, եւ այդ

չունեն աւելացնելու, բացի այն իրավիճակից, որ կար պատերազմական շրջանում Հայաստանում: Տէր-Պետրոսեանը նախագահի կեցուածքով, չվախենալով նոյնիսկ այն հարցերից, որոնք իր դէմ կարող են օգտագործել, ազնուօրէն ասաց այն ամէնը, ինչ ինքը տեսնում է: Եւ միանշանակ կարողացաւ շատ բացատրութիւններ տալ իր տեսակէտներին», - ըսաւ Ընկերուհի Լիւսմիլա Սարգսեան:

մօտեցումներն ու դիրքորոշումները կը ձեւաւորուեն խորհրդակցելով մեր բարեկամ երկրների հետ, այդ թւում՝ նաեւ Ռուսաստանի եւ ոչ միայն Ռուսաստանի», - ասաց արտգործնախարարութեան խօսնակը:

Հայաստանի խորհրդարանականները, մասնաւորապէս «Բարգաւաճ Հայաստան», ՀՅԴ, ՀՀԿ խմբակցութիւնների ներկայացուցիչները, մինչդեռ, այսօր հնչեցրեցին իրենց բացասական կարծիքը նշուած առաջարկութեան վերաբերեալ:

ԱԶԳԱՅԻՆ

ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊԱՇՏՕՆԱՊԷՍ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 1-ին

եանը: Երրորդ տեղին յաւակնում են փոխվարչապետ Յովիկ Աբրահամեանը եւ նախագահի աշխատակազմի ղեկավար Արմէն Գէորգեանը»:

Ապա, նախկին նախագահը թուարկեց իշխանութիւններու գործունէութիւնը ապահովող կառուցներն ու օղակները՝ մաքսային, հարկային պետական կոմիտէներ, Կենտրոնական բանկ, Դատախազութիւն, Ոստիկանութիւն, Հանրային հեռուստատեսութիւն, իշխանութիւններու վերահսկողութեան տակ գտնուող մասնաւոր

տարարեց. «Չեմ կասկածում, որ վաղն իմ ընդդիմախօս-բարեկամները յայտարարելու են. «Տէր-Պետրոսեանը պարտուողական տրամադրութիւններ է սերմանում եւ մտադիր է հող նախապատրասել Ղարաբաղն Ատրպէյճանին ծախելու համար»: Կանխաւ դիմելով նրանց, թախանձում եմ. «Հանգստացէ՛ք յարգելիներս: Դադարէ՛ք գբաղուել դէմագոգիայով: Բաւական է հայրենասիրական ճառերով մոլորեցնել ժողովրդին: Բաւական է նրանից թաքցնել ճշմարտութիւնը: Ժողովուրդն աւելի խելօք, տրամաբանող ու բանական է, քան ձեզանից շատերը»: Մէկանգամ

ական ոգին»:
Ստեփան Դեմիրճեան անդրադարձաւ նաեւ վերջերս ոստիկաններու եւ քայլերթի մասնակիցներու միջեւ տեղի ունեցած ընդհարումին: «Մենք դատապարտում ենք Հոկտեմբերի 23-ին իշխանութեան ներկայացուցիչների՝ ոստիկանութեան սաղրիչ գործողութիւնները: Երթի մասնակիցները գործում էին օրէնքի շրջանակներում: Իշխանութեան այդօրինակ գործողութիւնները վկայում են իշխանական ճամբարում տեղծուած խուճապի մասին»:

Դեմիրճեան Հոկտեմբեր 27-ի ոճրագործութեան ութերորդ տարելիցի կապակցութեամբ յայտարարեց հետեւեալը. «27»-ի հետ կապուած շատ հարցեր մնում են անպատասխան: Մասնաւորապէս, ինչո՞ւ յանցագործութեան առաջին իսկ օրուանից Ռոբերտ Քոչարեանի կողմից շրջանառութեան մէջ դրուեց այդ մարտապանների՝ ինքնուրոյն գործելու վարկածը: Ինչո՞ւ այդ համակարգից ունէ մէկը պատասխանատուութեան չենթարկուեց: Աւելին, ոմանք առաջ քաշուեցին, ինչպէս եղաւ, որ մի շարք վկաներ յայտնուեցին արտասահմանում՝ օվկիանոսից այն կողմ եւ ինչո՞ւ գործով անցնող որոշ անձինք յանկարծակի մահացան: Ինչո՞ւ որոշ կարեւոր վկաներ չներկայացան դատարան»: Այս հարցերին պատասխանեց ինքը՝ Ստեփան Դեմիրճեանը. «Իշխանութիւնները ամէն ինչ արեցին առնուազն Հոկտեմբերի 27-ի գործը կոծկելու համար: Եւ այդքանից յետոյ ոմանք դեռ խօսում են քաղաքական շահարկումներից: Արդ երբուանի՞ց է յանցագործութեան բացառական շահարկումը դառել քաղաքական շահարկում: Եւ տեսէ՛ք, թէ ովքեր են խօսում», - յայտարարեց ՀԺԿ առաջնորդը:

Ելույթ ունեցաւ նաեւ «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան: Ան եւս անդրադարձաւ Հոկտեմբերի 27-ին: «Միանգամից ասեմ, որ ես

շատ բան կը տալի, միայն 1999 թուականի Հոկտեմբերի 27-ը տեղի չունենար: Բայց ամէն ինչ է՛ք, որ մեզանից է կախուած: Այս օրը իմ կեանքի ամենասեւ օրն էր եւ այդպէս էլ կը մնայ մինչեւ իմ կեանքի վերջը: Այդ օրուանից յետոյ ես ինձ պարտաւորուած եմ գոլմ ապրել եղբօրս՝ Վազգէն Սարգսեանի փոխարէն», - յայտարարեց Արամ Սարգսեան եւ աւելացրեց. «Այդ օրը զլխատուեց իմ երկիրը: Բոլորդ էլ յիշում էք, թէ ով էր այն ժամանակ ԱԱ նախարարը: Եթէ մեղաւոր չլինէր, պաշտօնանկ չէր արուի: Եթէ մեղաւոր չէր, ինչո՞ւ պաշտօնանկ արեցին», - հարց տուաւ «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդը եւ Ստեփան Դեմիրճեանի օրինակով՝ գնահատականներ տուաւ «27»-ի ոճրագործութեան յաջորդած քաղաքական իրավիճակին:

Արամ Սարգսեան նաեւ չպահեց իր ականալիքները Լեւոն Տէր-Պետրոսեանին: «Լեւոն Տէր-Պետրոսեանի պարագայում յաղթանակը լինելու է մինչեւ ընտրութիւններ եւ լինելու է ոգով »: Արամ Սարգսեան հանրահաւաքը որակեց այսպէս. «Գործող իշխանութիւններու վերջի սկիզբը ազդարարող հանրահաւաք կամ՝ ՀՀ երրորդ նախագահի առաջին հանրահաւաքը»:

Հայաստանեան աղբիւրներու համաձայն, հանրահաւաքէն յետոյ Ռոբերտ Քոչարեան կազմակերպած է իշխանական վերնախաւի ժողով, որ տեղի ունեցած է Ազգային Անվտանգութեան ամառանոցէն ներս: Հաւաքին մասնակցած են իշխանութեան այն բոլոր օղակներու պատասխանատուները, որոնք կոչուած են իրականացնելու իշխանութեան նախընտրական շրջանի ծրագիրները: Հաւաքի ընթացքին բաւական երկար քննարկել են երկրէն ներս ստեղծուած նոր իրավիճակը, հնարաւոր զարգացումները եւ իշխանական օղակներու գործողութիւնները այս կամ այն տարբերակի պարագային:



Տեսարան մը քաղաքացիական ցուցարարի ժամանակ

լրատուամիջոցներ:

Իր ելույթի ընթացքին առաջին նախագահը Ռոբերտ Քոչարեանին եւ վարչապետ Սերժ Սարգսեանին կոչ ըրաւ հրաժարական տալ:

Անդրադառնալով «Հոկտեմբերի 27»-ի գործին՝ Լեւոն Տէր-Պետրոսեան ըսաւ. - «Մենք ազգովին ականատեսը եղանք չափազանց արտառոց մի երեւոյթի՝ հանրապետութեան նախագահը իր բացառապէս միջամտութիւններով ոչ միայն ամէն ինչ արեց հետաքննութեան եւ դատավարութեան բնականոն ընթացքը խոչընդոտելու ուղղութեամբ, այլեւ փաստօրէն վիժեցրեց դաւադրութեան հնարաւոր կազմակերպիչների բացառապէս գործը»:

Խօսելով դարաբաղեան հարցի մասին նախկին նախագահը յայ-

ընդմիջտ պէտք է գիտակցել՝ Հայաստանի ոչ մի նախագահ, ամենամեծ ցանկութեան դէպքում անգամ, չի կարող ծախել Ղարաբաղը: Նախ եւ առաջ այն պատճառով, որ Ղարաբաղի բախտը պէտք է վճռի ոչ թէ Հայաստանը կամ Ատրպէյճանը, այլ միայն ու միայն Ղարաբաղի ժողովուրդը»:

(Ելույթը տեսնել յաջորդ էջերուն վրայ):

Աւելի քան 50 հազար հոգիներու ներկայութեան կայացած հանրահաւաքը վարեց նախկին արտաքին գործոց նախարար Ալեքսանտր Արզումանեան:

Առաջին ելույթ ունեցողը եղաւ ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեան: Ան իր խօսքը սկսաւ հետեւեալ ձևով. «Այսօրուայ հանրահաւաքը ցոյց է տալիս, որ Հայաստանում արթնանում է քաղաքացի-

ԲԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂՈՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00
Կլէնտոյլի CHARTER CABLE 26-րդ կայանից

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB
626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ԵԼՈՅԹ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 26-Ի ԵԼՈՅԹԵՆ ԻՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉԵԼՈՒ ԵՒ ՐԱՇԻ ՊԱՐԱՆՁԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Մի րեկի հայրենակիցներ, 1988 թվականի հուլիսի համաժողովրդական շարժման սկզբնաւորումը չի շեղում այս միջնորդը յուշում է ելույթս վերնագրել «Իրերն իրենց անունով կոչելու եւ հաշիւ պահանջելու ժամանակը»: Դա անհրաժեշտ է՝ նախ եւ առաջ ամփոփելու համար Քոչարեանի նախագահութեան տասնամեայ ժամանակաշրջանը, եւ երկրորդ՝ յստակ պատկերացնելու Հայաստանի առջեւ կանգնած ներկայ մարտահրաւէրները: Սեպտեմբերի 21-ի ելույթում ես ընդամենը կատարել եմ մէկ-երկու շեշտադրում, որոնց արձագանքներն ինձ այժմ թելադրում են՝ դրանց անդրադառնալ աւելի հանգամանորէն եւ փաստարկուած: Սկզբից թէեւ հարկ եմ համարում զգուշացնել, որ ես տալու եմ զուտ քաղաքական գնահատականներ՝ հիմնուած բացառապէս պաշտօնական վիճակագրութեան եւ մամուլում հրատարակուած տուեալների վրայ: Այդ գնահատականները, հետեւաբար, իրաւական ուժ չունեն եւ ամենեւին չեն սասանում ստորեւ չիշատակուելիք անձանց անմեղութեան կանխավարկածը: Քանի դեռ չկան եւ չեն լինի դատական կարգով ընդունուած վճիռներ՝ նրանք նոյնքան անմեղ են, որքան այս հրատարակում կանգնածներից իւրաքանչիւրը:

ՔՈՉԱՐԵԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱՌՄԻԻ ԿԱՄ ՌԵՃԻՄԻ ԵՒ ԻՌԻԹԻՒՆԸ

Արդեն չիշատակուած իմ ելույթում Հայաստանի ներկայ իշխանութիւնը եւ բնութագրել էի հետեւեալ խօսքերով. «Վերից վար կողմնակցուած, յանցագործ մի վարչակազմ, որի յարաբերութիւնները կարգաւորուած են ոչ թէ օրէնքներով, ոչ թէ ժողովրդի կամքով, ոչ թէ քաղաքական երկխօսութեամբ, այլ քրէական աշխարհի կանոններով: Այսինքն՝ լիովին մափիող, մինչեւ վերջին երանգը ստրուկտուրիզացուած մի ռեժիմ, որը մեզ այսօր արդէն գլորել է երրորդ աշխարհի նմանատիպ ռեժիմների շարքը»: Դասական պետականագիտութեան տերմինոլոգիայում այդպիսի իշխանութիւնը կոչուած է «կլեպտոկրատիա», բառացի՝ «զողապետութիւն»: Սակայն ես կը նախընտրէի «աւագապետութիւն» բառը, որն աւելի ճշգրիտ է արտայայտում հակապետութեան բովանդակութիւնը, քանի որ գողութիւնը անհատական

յանցագործութիւն է, իսկ աւագապետութիւնը՝ խմբային: Ո՞րն է, արդ, իշխանութեան աւագապետական համակարգի գոյութեան իմաստը եւ հետապնդած նպատակը: Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ իշխանութեան բոլոր լծակներին տիրող մարդկանց սահմանափակ խմբի բարօրութեան ապահովում՝ սեփական ժողովրդի անխնայ հարստահարման եւ կեղեքման գնով: Այդ ամէնը ցինիկաբար քողարկուած է հայրենասիրութեան, պետական շահի, Յեղասպանութեան ճանաչման, Արցախի անկախութեան վերամբարձ կարգախօսներով: Այնինչ միանգամայն ակնյայտ է, որ հայրենիքը նրանց համար ընդամենը նուաճուած տարածք է, կամ առաւելագոյն՝ օբիեկտ, պետական շահ կոչեցեալը՝ ստորագոյն անձնական շահահինդրութիւն, իսկ Յեղասպանութեան ճանաչումն ու Արցախի ազատագրումը՝ էժան մանրադրամ իրենց հակօրինական ծրագրերի իրականացման գործում: Նրանց ճարտասանութեան աստիճանն ուղիղ համեմատական է իրենց յափշտակած հարստութեան ծաւալին: Որքան շատ են խօսում հայրենասիրութիւնից, պետական շահից ու ժողովրդի բարօրութիւնից, այնքան շատ են կորզում նոյն այդ ժողովրդի գրպանից:

Աւագապետական համակարգի կառուցուածքն ու հանգուցային օղակները Հայաստանի ներկայ իշխանական համակարգը կառուցուած է մոնոլիտ բուրգի սկզբունքով եւ յստակ սահմանուած նուիրապետական-հիերարխիկ աստիճանակարգով: Բուրգի գագաթը հանրապետութեան նախագահ Ռոբերտ Քոչարեանն է: Երկրորդ տեղն զբաղեցնում է վարչապետ, ոչ հեռաւոր անցեալում պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը: Երրորդ տեղին յաւակնում են փոխ վարչապետ Հովիկ Աբրահամեանը եւ նախագահի աշխատակազմի ղեկավար Արմէն Գէորգեանը: Այնուհետեւ գալիս են նախարարների, փոխնախարարների, մարդպետների մեծագոյն մասը, ինչպէս նաեւ որոշ տիրահոլակ քաղաքապետներ ու թաղապետներ: Յանցաւոր այս համակարգի գործունէութիւնն ապահովում է մի քանի հանգուցային օղակների շնորհիւ: Առաջին. նախագահի աշխատակազմի ղեկավարը, որի ազդեցութիւնը յատկապէս մեծ էր Արմէն

Դարբինեանի եւ Անդրանիկ Մարգարեանի վարչապետութեան շրջանում, երբ փաստօրէն Ալեքսան Յարութիւնեանն ու Արմէն Գէորգեանն էին լուծում կադրային հարցերը, սահմանում առքուվաճառքի պայմանները, տնօրինում արտօնութիւնների շնորհումը, ապահովում ձեւական աճուրդների ու տեղերների անցկացումը: Այսինքն, նրանք օժտուած էին իրենց իրաւասութիւններից դուրս գտնուող այնպիսի ֆունկցիաներով, որոնք կորզուած էին կառավարութեան օրինական լիազօրութիւնների շրջանակից:

Երկրորդ հանգուցային օղակը Արմէն Աւետիսեանի գլխաւորած Մաքսային վարչութիւնն է, որի ֆունկցիան մաքսային վերահսկողութեան իրականացումից ու օրինական մաքսավճարների գանձումից վերաճուել է համապետական մասշտաբի մաքսանենգութեան ֆունկցիայի: Մաքսային վարչութիւնն է մոնոպոլիաների ձեւաւորման, ներմուծուող ու արտահանուող ապրանքների քվոտաների բաշխման, գործարարներին անհատաւար պայմանների մէջ ղնելու, անցանկալի տնտեսական մրցակիցներին ասպարէզից դուրս մղելու եւ անանկութեան հասցնելու մեքենան: Թէեւ ոչ նոյն չափով, նշուած նպատակներին ծառայում է նաեւ հարկային տեսչութիւնը, որի գործունէութիւնից տուժում են յատկապէս մանր ու միջին մեծութեան ընկերութիւններն ու անհատ ձեռներէցները, քանի որ խոշոր հարկատուներն իրենց մուծումների մեծագոյն մասը կատարելով բոլորովին այլ տեղ, ըստ էութեան, դուրս են այդ ծառայութեան իրաւասութիւնների սահմաններից:

Երրորդ կարեւորագոյն օղակը՝ դատախազութեան համակարգը, որ ղեկավարում է Ադուան Յովսէփեանը, ապահովում է աւագապետական ռեժիմի իրաւական անվտանգութիւնն ու անպատժելիութիւնը, քողարկում եւ պարտակում նրա բոլոր օրինախախտումներն ու յանցագործութիւնները, շինծու քրէական հետապնդումներով ահաբեկում եւ լուցնում վարչախմբի հակառակորդներին ու ընդդիմախօսներին:

Ռեժիմի կենսագործունէութիւնն ապահովող չորրորդ հանգուցային օղակի դերում հանդէս է գալիս կենտրոնական բանկը, որի

վարած ֆինանսական քաղաքականութիւնը, մասնաւորապէս՝ դրամի արժեւորման կասկածելի գործընթացը, կործանում է երկրի առանց այդ էլ խղճուկ արդիւնաբերութիւնը, էպպէս սահմանափակում տեղական ապրանքների արտահանման հնարաւորութիւնները եւ մտնում արտասահմանեան տրանսֆերների ռէալ արժէքի աւելի քան 40 տոկոսը, որը մտնում է ներկրող մոնոպոլիստների եւ նրանց հովանաւորող պետական պաշտօնեաների գրպանը: Բացի այդ, կենտրոնական բանկի վերահսկողութեան տակ գտնուող բանկային համակարգն իրականացնում է ռեժիմի ֆինանսական հոսքերը եւ յանցաւոր ճանապարհով ձեռքբերուած հսկայական գումարների օրինականացման գործը:

Եւ վերջապէս հինգերորդ հանգուցային օղակը՝ հանրային հեռուստատեսութիւնը, Ալեքսան Յարութիւնեանի գլխաւորութեամբ, ապահովում է յանցաւոր վարչախմբի պրոպագանդիստական պաշտպանութիւնն ու ջանասիրաբար իրականացնում նրա ընդդիմախօսների ու քաղաքական հակառակորդների վարկաբեկման ստորագոյն գործը: Այդ հարցում նրանից հետ չեն մնում նաեւ պետութեան ուղղակի կամ անուղղակի ազդեցութեան տակ գտնուող մի քանի այլ հեռուստատալիքներ եւ տպագիր մամուլի օրգաններ:

ՌԵՃԻՄԻ ԶԵՒԱՒՈՐՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԹԱՅԻՆ

Յանցաւոր այս ռեժիմը ձեւաւորուել է ոչ միանգամից: Նրա սկզբնաւորումն ուղղակիօրէն կապուած է 1999 թ. Հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան հետ: Նման համակարգի գոյութիւնն անհնար էր կարէն Դեմիրճեանի եւ Վազգէն Մարգարեանի քաղաքական դաշինքի առկայութեան պայմաններում, քանի որ խորհրդարանի մեծամասնութիւնը եւ կառավարութիւնը գտնուում էր նրանց լիակատար հսկողութեան տակ: Իսկ սա մի այնպիսի լուրջ հակակշիռ էր, որը ոչ միայն անհնար էր դարձնում նախագահի կողմից որեւէ օրինախախտում, այլեւ վերջինիս լիազօրութիւնները հաւասարեցնում Անգլիայի թագուհու կարգավիճակի: Հոկտեմբերեան սպանդն էր,

Շաբ.ը էջ 7



A.A.A. INSURANCE SERVICES

Life, Health, Group Health, Disability, Long Term Care

Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California

33th ANNIVERSARY

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՅ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI- TAD"



ԵԼՈՅԹ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 26-Ի ԵԼՈՅԹԵՆ ԻՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉԵԼՈՒ ԵՒ ՐԱԾԻ ՊԱՐԱՆՁԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Մարտնակուած էջ 6-էն

ահա, այն գլխաւոր հանգրուանը, որը բացեց քոչարեանական ռեժիմի ձեւաւորման ու զարգացման լայնահուն ճանապարհը: Այդ եղեւնագործութիւնից յետոյ՝ մնացածն, ինչպէս ասում են, տեխնիկայի հարց էր:

ՌԵԺԻՄԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ
Քոչարեանական ռեժիմի գործունէութեան ծանրագոյն հետեւանքը Հայաստանի տնտեսական համակարգի ձեւախեղումն է: Այն ոչ մի կապ չունի ո՛չ սոցիալիզմի, ո՛չ ֆեոդալիզմի, ո՛չ իսկ անուանապէս հռչակուած կապիտալիզմի հետ, եւ աւելի շուտ յիշեցնում է թաթար-մոնղոլական տիպի խանական համակարգ: Օր ու գիշեր թմբկահարող լիբերալ տնտեսութիւնը մեր երկրում սոսկ ֆրիկցիա է, քանի որ տնտեսական բնագաւառում ամէն ինչ կարգաւորուած է ոչ թէ շուկայական յարաբերութիւններով, այլ իշխանութիւնը բռնազաւթած խոնարհի կամքով ու հրահանգներով: Նախագահի ու վարչապետի փակ գրասենեակներում են որոշուած սեփականութեան բաշխման, պետական գոյքի եւ հողի վաճառքի, մենաշնորհային արտօնութիւնների շնորհման, աճուրդների եւ տեղեկանքների կազմակերպման, արտահանման եւ ներմուծման քվոտաների սահմանման, ընդհուպ մինչեւ լիցենզիաների տրամադրման եւ հողայատկացումների ու շինարարական աշխատանքների թոյլտուութեան հարցերը: Այսինքն՝ հիմնովին խախտուած են կապիտալիստական կամ շուկայական տնտեսութեան երեք ամենագլխաւոր սկզբունքները՝ հասարակ հարաւորութիւնների ընձեռումը, ազատ մրցակցութեան ապահովումը եւ սեփականութեան անձեռնմխելիութեան երաշխաւորումը: Այլապէս աշխարհի ո՞ր երկրում կարելի էր պատկերացնել, որ «ՊԱԶ»-ի մի սովորական վարորդ մէկ-երկու տարում այնքան կարող է հարստանալ, որ ընդունակ լինի տասնեակ միլիոնաւոր դոլարի ներդրումներ կատարել, սակեք, ոչ թէ իր հայրենի Արցախի, այլ Ամերիկայի Միացեալ Նահանգների տնտեսութիւնում: Կամ՝ 25-

ամեայ մի երիտասարդ, համալսարանն աւարտելուց 2-3 տարի անց, կարող է դառնալ Հայաստանի 10 ամենահարուստ գործարարներից մէկը:

ՎԱՐՉԱՆՄԲԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ
Հեռուստատեսութեան պատկերող վիրտուալ աշխարհի, երկնիչ տնտեսական ցուցանիշների եւ երեւանի կենտրոնի տպաւորիչ կառուցապատման ֆոնի վրայ, փորձագէտներն, այդ թւում՝ միջազգային, Հայաստանի բնակչութեան կենսամակարդակի որակական փոփոխութիւնն են արձանագրում: Այս երեւոյթի մասնագիտական բացատրութիւնները, որքան էլ տրամաբանական, հեռու են համոզիչ, առաւել եւս սպառնիչ լինելուց: Փաստը մնում է փաստ, որ սոցիալական բեւեռացումը ոչ թէ մեղմանում, այլ գնալով խորանում է, այսինքն՝ հարուստներն աւելի են հարստանում, իսկ աղքատներն՝ աւելի աղքատանում: Մայրաքաղաքի կենտրոնի շքեղ խանութներից, ռեստորաններից, ժամանակակից բնակարաններից օգտւում են բնակչութեան ոչ աւելի, քան 5 տոկոսը: Ժողովրդի մեծագոյն մասը, գլխաւորապէս մարզային քաղաքներում եւ գիւղական վայրերում, մասնաւորապէս լիակատար թշուառութեան ու ամենօրեայ գոյսպայքարի: Կիսադատարկ գիւղեր ու ցաքուցիւր ընտանիքներ. ահա սա է Հայաստանի իրական պատկերը: Ասուցեք արդէն, որ երկրի բնակչութեան գլխաւոր եկամուտը արտերկրից կատարուած դրամական փոխանցումները կամ տրանսֆերներն են, որոնց ծաւալը շուրջ 40 տոկոսը, դոլարի կուրսի անշեղ անկման պատճառով, այլեւս չի հասնում իր հասցէատէրերին: Ուստի տրանսֆերների տարեցտարի աճող ծաւալներն ամենեւին բնակչութեան կենսամակարդակի բարելաւում չեն նշանակում:

ԲԱՐՈՅԱ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ
Քոչարեանական ռեժիմի գործունէութեան ամենացաւալի հետեւանքներից մէկն, ակներեւաբար, երկրում ստեղծուած անառողջ բարոյական մթնոլորտն է: Անկախութեան առաջին տասնամեակի ոգե-

ւորութեան, ազատութեան, հպարտութեան զգացումը փոխարինուել է վախի, ստրկամտութեան, յուսահատութեան, ատելութեան զգացումով: Բարքերի անկումը հասել է այն աստիճանի, որ այլեւս հասարակական չարիք չեն դիտուում քաղքեհիութիւնը, կաշառակերութիւնը, ընչաքաղցութիւնը, սուտը, մասնութիւնը, կարիերիզմը եւ ստորաքարշուութիւնը: Ռեժիմի անբարոյ գործունէութեան արդիւնքում առաջին պլանն են մղուել մարդ-արարածի ամենաստորին բնագոյնները: Դրանով ահռելի հարուած է հասցուել ազնուութեան, արդարութեան, պարկեշտութեան, ինքնագոհութեան վերաբերեալ մեր ժողովրդի մէջ աւանդաբար ձեւաւորուած պատկերացումներին: Ժողովուրդը կորցրել է հաւատը պետական ինստիտուտներին, օրէնքի, քաղաքական գործիչներին, կուսակցութիւններին, մինչեւ իսկ բարոյական հեղինակութիւնների նկատմամբ: Չբացել է մարդկանց բնական կապուածութիւնը հայրենի հողին: Հայրենիքը, տունը, նոյնիսկ ընտանիքը լքելու երեւոյթը դարձել է աւօրեայ եւ սովորական: Հասարակութիւնը վերածուել է, աւելի ճիշդ՝ նրան վերածել են կասկածամիտ, թերահաւատ, իդեալագուրդ, յուսահատ զանգուածի, ինչը չափազանց յեղեղուկ ատաղձ է հզօր պետութիւն կերտելու տեսակետից: Մի կողմից հիացմունքով, միւս կողմից ցաւով պիտի նշենք, որ մեր ժողովուրդը շատ աւելի հպարտ, եռանդուն ու շատ աւելի պատեւազմի, կամ եթէ կ'ուզէք ցրտի ու մթի տարիներին, քան այսօր: Իսկ դա յոյս է ներշնչում, որ նա անպայման կը վերագտնի իր արժանապատուութիւնը եւ կրկին տէր կը կանգնի իր երկրին ու ապագային:

ԻՐԱԻԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ
Իրաւական հետեւանքներ ասելով՝ են առաջին հերթին նկատի ունեւ դատական իշխանութեան անկախութեան լիակատար ոչնչացումը: Դա ապացուցելու համար, եթէ չլինէին անգամ այլ փաստարկներ, որոնք, ի դէպ, չափազանց առատ են, բաւական էր, թէկուզ, Պարզեւ Օսանեանի հետ այս օրերին կապուած ամենաթարմ իրադարձութիւնը: Տասը տարուայ ընթացքում, ի խախտումն միակուռ համակարգի կա-


նոնների, վերջապէս գտնուեց մի դատաւոր, որը համարձակուեց արդարացման վճիռ կայացնել, եւ հանրապետութեան նախագահի ձեռքով անմիջապէս հեռացուեց զբաղեցրած պաշտօնից: Ինչ վերաբերում է իրաւապահ միւս մարմիններին՝ դատախազութեանը, ոստիկանութեանը, անվտանգութեան ծառայութիւններին, ապա դրանք վաղուց վերածուել են ռեժիմի հաւատարմօրէն սպասարկող պատժիչ մեքենայի: Գտնուելով հանրապետութեան նախագահի եւ վարչապետի լիակատար հսկողութեան տակ, այդ մարմիններն այսօր օրինակելի ստորաքարշուութեամբ ու ծառայամտութեամբ իրականացնում են երկու ֆունկցիա. առաջինը՝ կոծկել, թաքցնել, պարտակել ռեժիմի ահաւոր յանցագործութիւնները՝ կաշառակերութիւնը, թաւանը, նոյնիսկ ահաբեկչութիւններն ու սպանութիւնները, եւ երկրորդը՝ հաբեկել ու քրէական հետապնդումների ենթարկել իշխանութիւնների քաղաքական եւ տնտեսական հակառակորդներին: Նրանց գործունէութեան գլխաւոր մեթոտը բոլոր ակտիւ քաղաքացիների, այդ թւում՝ այս հրապարակում կանգնածներից շատերի վերաբերեալ, այսպէս կոչուած, կոմպրոմիսներ հաւաքելն ու յատուկ թղթապանակներ (դոսիէներ) կազմելն է: Ընդ որում, այդ նպատակով գործի է դրուում ստալինեան բռնապետութեան ողջ գիւծնոցը՝ մասնութիւնը, անստորագիր ահազանգերը (այլ կերպ՝ անոնիմալները), անօրինական հեռախօսալուծումները, իրեղէն ապացուցների կեղծումը, բռնութեամբ ցուցմունքներ եւ ինքնախոստովանական յայտարարութիւններ կորզելու պրակտիկան, բացառապէս մէկ մարդու ցուցմունքով կայացած դատավարութիւնները եւ այլն:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ
Ասուցեք արդէն, որ Հայաստանի ներկայ յանցաւոր իշխանական համակարգի ձեւաւորման սկիզբն ուղղակիօրէն կապուած է 1999 թուականի Հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան հետ: Չնայած անցած ութ տարիներին արտադատութեան հազարաւոր գնահատականներին ու վեր-

Մարտ էջ 8

Լարք Երաժշտական Ընկերակցութիւն
ՏԱՐԵԿԱՆ ԵՔԵՂ ԾԱՇԿԵՐՈՅԹ
LARK ANNUAL BANQUET
Grand Salon, The Queen Mary
1126 Queen's Highway, Long Beach, CA 90802
Sunday, November 4, 2007, 6:30 pm
Come early and enjoy the wonderful view!
Program
•LAVISH DINNER •MUSICAL PRESENTATION •DOOR PRIZES
Donation: \$85.00
For tickets and more information, please call:
LARK office: (818) 500-9997
Transportation to the Queen Mary from Lark may be arranged through the Lark office.

LARK ANNUAL BANQUET
ON BOARD THE QUEEN MARY



ԼԱՐՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԵՔԵՂ ԾԱՇԿԵՐՈՅԹ
QUEEN MARY ՆԱԻԻ ՎՐԱՅ

ԵԼՈՅԹ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 26-Ի ԵԼՈՅԹԵՆ ԻՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉԵԼՈՒ ԵՒ ՎԱՃԻՒ ՊԱՐԱՆՁԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Շարունակում է 9-էն

Թուացել է, թէ եւ ԱԶԿ-ի միջնորդներն այնքան միամիտ են, որ կ'ընկնեն թակարդը եւ գերծ կը մնան իրենց վրայ ճնշումներ բանեցնելուց: Եթէ միջնորդները մինչ այժմ ձեռագրել են, թէ հաւատում են հայկական կողմի անկեղծութեանը, դա ամենեւին չի նշանակում, որ նրանք չեն հասկացել վերջինիս պարզունակ խաղը: Այն, որ նրանք մեծ ջանք չեն թափել կողմերին սկզբունքային համաձայնությունների բերելու ուղղությամբ, բացատրում է պարզապես այն պատճառով, որ գերտէրութիւնների առաջնահերթութիւնների շարքում Ղարաբաղի հարցն զբաղեցնում է, թերեւս, հազարերորդական տեղ: Հայաստանի իշխանութիւններն, անթաքտ չց հրճումներով, այս ամէնը համարում են իրենց մեծագոյն յաջողութիւնը, քանի որ, ըստ նրանց, դա նպաստում է դարաբաղեան ստատուս-քվոյն պահպանելու ծրագրին: Ստատուս-քվոյի պահպանման ձգտումը հիմնուած է այն փիլիսոփայութեան վրայ, որ միջազգային հանրութիւնը վաղ թէ ուշ հաշտուելու է կատարուած փաստի հետ ու վերջիվերջոյ ճանաչելու Լեւոնային Ղարաբաղի անկախութիւնը: Տեսականորէն սա ճիշդ փիլիսոփայութիւն է, մանաւանդ պատմական առումով հիմնաւորուած մի քանի գործնական նախադէպերով: Ամբողջ ինդիւրն այն է, ինչպէս դեռ տասը տարի առաջ մի առիթով նշել էի, թէ Հայաստանն ունի՞, արդեօք, 20-30 տարի ստատուս-քվոյն պահպանելու հնարաւորութիւն, նրա ուսուրանքը կը բաւարարե՞ն, արդեօք, զարգացնելու սեփական տնտեսութիւնը, յաղթահարելու շրջափակումների եւ մեկուսացման շարունակ խոչընդոտները, եւ վերջապէս՝ մեր երկիրը կը դիմանա՞ց, արդեօք, Ատրպէյճանի հետ մրցակցութեանը: Ստատուս-քվոյն ոչ թէ քարտէզ է, ոչ թէ գինադադարի գիծ, այլ ուժերի կայուն հաւասարակշռութիւն: Այս տեսանկիւնից հարցը դիտարկելիս, ցաւով պէտք է արձանագրել, որ մենք գտնուում ենք բաւականին մտահոգիչ, եթէ չասենք, անմխիթար վիճակում: Եթէ սրանից տասը տարի առաջ Հայաստանը եւ Ատրպէյճանն իրենց մարդկային, տնտեսական եւ ռազմական ռեսուրսներով քիչ թէ շատ համադրելի ուժեր էին, ապա այսօր, նոյն չափորոշիչներով, նրանց միջեւ առաջացել է առեւտրի ճեղքում, որը խորանալու միտում ունի: Մակրոտնտեսական ցուցանիշների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ բոլոր բնագաւառներում Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերը տարէցտարի աւելի ու աւելի ետ են մնում Ատրպէյճանի զարգացման տեմպերից: 1997-2006 թուականների կտրուածքով Հայաստանի համախառն ներքին արդիւնքն աճել է մօտաւորապէս 4, իսկ Ատրպէյճանինը՝ աւելի քան 5 անգամ, արդիւնաբերական արտադրանքի աճը Հայաստանում կազմել է 3 անգամ, Ատրպէյճանում՝ 5, 3 անգամ, բիւջէն՝ Հայաստանում 3,8 անգամ, Ատրպէյճանում՝ 5 անգամ, արտահանումը՝ Հայաստանում 4, Ատրպէյճանում՝ 8 անգամ, արտաքին առեւտրի հաշուեկշիռը 2006 թ. տուեալներով՝ Հայաստանում բացասական (1 միլիարդ 190 միլիոն դոլար), Ատրպէյ-

ճանում դրական (1 միլիարդ 104 միլիոն դոլար): Արդեն իսկ յայտնի է, որ 2007 թուականի ցուցանիշների ամփոփումը մեզ համար աւելի տխուր պատկեր է ներկայացնելու: Չեմ կասկածում, որ վաղն իմ ընդդիմախօս- բարեկամները յայտարարելու են. «Այսպիսի տուեալներ հրապարակելով՝ Տէր-Պետրոսեանը պարտաւորական տրամադրութիւններ է սերմանում եւ մտադիր է հող նախապատրաստել Ղարաբաղն Ատրպէյճանին ծախելու համար»: Կանխաւ դիմելով նրանց, թախանձում եմ. «Հանգստացէ՛ք յարգելիներս: Դադարէ՛ք զբաղուել դէմագոյնալով: Բաւական է հայրենասիրական ճառերով մոլորեցնել ժողովրդին: Բաւական է նրանից թաքցնել ճշմարտութիւնը: Ժողովուրդն աւելի խելօք, տրամաբանող ու բանական է, քան ձեզանից շատերը»: Մէկանգամ ընդմիջու պէտք է գիտակցել՝ Հայաստանի ոչ մի նախագահ, ամենամեծ ցանկութեան դէպքում անգամ, չի կարող ծախել Ղարաբաղը: Նախ եւ առաջ այն պատճառով, որ Ղարաբաղի բախտը պէտք է վճուի ոչ թէ Հայաստանը կամ Ատրպէյճանը, այլ միայն ու միայն Ղարաբաղի ժողովուրդը: Եւ երկրորդ՝ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի 1992 թուականի Յուլիսի 8-ի որոշմամբ՝ Հայաստանը չի կարող ստորագրել որեւէ փաստաթուղթ, որտեղ «Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը նշուած կը լինի Ատրպէյճանի կազմում»: Ո՞րն է, արդ, պարտաւորականութիւնը՝ ժողովրդին անգիտութեան մէջ պահելով ու նրա զգօնութիւնը բխցնելով, մի օր արթնանալ ու տեսնել, որ Ղարաբաղը չկա՞ց, թէ՞ ճշմարտութիւնը բացայայտելով ու ահագանգ հնչեցնելով, փորձել համարիմբել ազգի ուժերը՝ այդ վերահաս վտանգը կանխելու համար:

ՈՐՈՇ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Երկարաշունչ խօսքս ամփոփելուց առաջ, հայցելով ձեր ներողամտութիւնը եւ մի փոքր եւս չարաշահելով ձեր համբերութիւնը, անհրաժեշտութիւն եմ զգում ձեզ հետ կիսուել մի քանի այլ նկատառումներով: Չուտ մարդկայնօրէն ինձ մեծագոյն ցաւ են պատճառում Հայաստանի պետական այրերի հասցէին այտեղ հնչեցուած խիստ գնահատականները, որովհետեւ թէ՛ Ռոբերտ Քոչարեանը, թէ՛ Սերժ Սարգսեանը եղել են իմ անձնական եւ մարտական ընկերները՝ անհատականութիւններ, որոնց անուններն ըստ արժանուոյն պէտք է արձանագրուեն հայ ժողովրդի նորագոյն պատմութեան մէջ: 1999 թուականից յետոյ նրանց դրսեւորած վարքագիծն ամենեւին չի կարող ջնջել կամ ստուերել նրանց՝ ու նաեւ Սամուէլ Բաբանյանի եւ Արկարի Ղուկասեանի անուրանալի եւ նշանակալից դերը, ինչպէս Արցախի ազատագրման, այնպէս էլ հայոց պետականութեան վերականգնման եւ ամբարկումն գործում: Իմ ելույթում հնչեցուած կոշտ որակումները թելադրուած են ոչ թէ նրանց վարկաբեկելու կամ դատապարտելու միտումով, այլ միայնումիայն ներկայ վարչախմբի վերարտադրման անթոյլատրելիութեան մասին հազգ անգելու անհրաժեշտութեամբ: Լաւագոյն էլքը եւ իրենց պատմական վաստակն ու արժանապատուութիւնը փրկելու վերջին շանսը կը

լինէր, եթէ Ռոբերտ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը կամաւոր հեռանալին քաղաքական ասպարէզից, ինչը, վստահ եմ, յաւուր պատշաճի կը գնահատուէր երախտապարտ եւ ներողամիտ հայ ժողովրդի կողմից: Կանխելով հնարաւոր մեղադրանքները, միանգամից ուզում եմ ընդգծել. իմ վերաբերմունքի մէջ բոլորովին դեր չի խաղում Քոչարեանի եւ Սարգսեանի դարաբաղի լինելու հանգամանքը: Եթէ նրանք արժանի լինէին, թող ոչ թէ տաս, այլ հարիւր տարի բարով կառավարէին Հայաստանը, ինչպէս նրանց նախնիները՝ արցախցի Հեթումեանները 150 տարի կառավարեցին Կիլիկիոյ թագաւորութիւնը: Ես անթոյլատրելի եմ համարում անպարկեշտ խօսակցութիւնների ու գրգռութիւնների միջոցով դարաբաղիներին եւ հայաստանցիներին միջեւ սեպ խրելուն միտուած տրամադրութիւնները, դրանք գնահատելով թէ՛ անարդար, թէ՛ վտանգաւոր: Ուստի կ'անեմ ինձնից կախուած ամէն ինչ՝ նման մտայնութեան տարածումն ու ամբարկումը կանխելու համար, մանաւանդ որ Քոչարեանի եւ Սարգսեանի ստեղծած իշխանական արատաւոր համակարգի յենասիւնների 99 տոկոսը կազմում են ոչ այլ ոք, քան հայաստանցիները:

Բոլորովին չեմ կասկածում, որ իմ ընդդիմախօսներից ոմանք վաղը նորից լուրջ դէմքերով կը յայտարարեն՝ Տէր-Պետրոսեանն այս անգամ եւս բաւարարուեց միայն փաստերի կոնստատացիայով ու քննադատութեամբ, չառաջարկելով որեւէ ծրագրային լուծում եւ չարձանաբեկով իրեն ու նախկին իշխանութիւններին ուղղուած մեղադրանքներին: Նախ, ծիծաղելի է տասը տարի լուծած մարդու մի ելույթից պահանջել բոլոր հարցերի պատասխանը, քանի որ իւրաքանչիւր ելույթ ունի իր խնդիրը: Մինչ քաղաքական գործչի պատճառով բացայայտուած է մի ամբողջ շարք ելույթների, մամուլի ասուլիսների, հարցազրոյցների, յօդուածների, նախընտրական ծրագրերի ու քարոզարշաւների հիման վրայ: Իսկ ինչ վերաբերում է մեղադրանքներին, ապա որպէսզի ոչ ոք չկարծի, թէ վախեցում կամ խուսափում եմ դրանցից՝ ինքս կը ներկայացնեմ դրանց ամբողջական կատալոգը կամ այն ամէնը, ինչն սպառնաց չիչեցնել մեր յարգարժան նախագահը՝ մոլթ ու ցուրտ տարիներ, մագութի գործ, էլեկտրաէներգիայի հողանցում, արդիւնաբերութեան քայքայում, վայրերի սեփականաշնորհում, ինայլ բանկի աւանդների փոշիացում, կուսակցութեան եւ թերթերի փակում, դաւաճանութիւն Արցախի գործին, սխալ կադրային քաղաքականութիւն, թուրքամէտութիւն, ապագ զայնութիւն, կոմպոզիտիւմ եւ այլն: Հաւատացած եմ, ոմանք չարախնդութեամբ, իսկ հասարակութեան մեծամասնութիւնն ամենայն անկեղծութեամբ սպասում են նշուած մեղադրանքների վերաբերեալ իմ բացատրութիւններին: Վստահեցնում եմ, դուք դեռ բազմաթիւ առիթներ կ'ունենաք լսելու այդ բացատրութիւնները: Իսկ թէ որքան համոզիչ կամ անհամոզիչ կը լինեն դրանք՝ կը մնայ ձեր դատին:

Հասկանում եմ, որ մեծագոյն ինտրիգը, որը ձեզանից շատերին բերել է այս հրապարակ, առաջիկայ

նախագահական ընտրութիւններում իմ առաջադրուելու կամ չառաջադրուելու հարցն է: Ուզում էք հաւատացէ՛ք, ուզում էք՝ ոչ, այդ հարցն ինձ առանձնապէս չի հետաքրքրում: Իմ համոզմամբ, Հայաստանի գլխաւոր խնդիրն այսօր ոչ թէ ապագայ նախագահի անձն է, այլ ներկայ վարչախմբի վերարտադրութեան վիճեցումը, քանզի դա արատաւոր, նուաստացուցիչ, սեփական քաղաքացիների հանդէպ օտարավարի վարուող, հայ ժողովրդին պատիւ չբերող իշխանութիւն է: Ինչպէս Սեպտեմբերի 21-ի ելույթում յայտարարել էի, եթէ յայտնուէր մի ուժ, որն ունակ լինէր լուծել այդ խնդիրը, ես ջանք չէի ինսպի նպաստելու նրա յաղթանակին, իսկ եթէ՞ ոչ, ապա ինձ ոչինչ չէր մնայ, քան հնազանդուել ժողովրդի կամքին: Ճիշդն ասած, ես տրամադրուել էի իմ վերջնական որոշումը կայացնել ընտրական գործընթացի սկզբնաւորման նախօրեակին: Սակայն իմ համակիրների նկատմամբ իշխանութիւնների կողմից վերջերս կիրառուած բռնութիւնները, ինչպէս նաեւ այս հանրահաւաքի հսկայական էներգետիկան, այլեւս անհետաձգելի են դարձնում նման որոշման կայացումը: Ուստի այս պահից ինձ յայտարարում եմ Հայաստանի Հանրապետութեան Նախագահի թեկնածու: Սա սոսկ յայտարարութիւն չէ, այլ իմ, որպէս քաղաքական գործչի, կարգավիճակի կտրուկ փոփոխութիւն: Հետեւաբար, այսուհետեւ իմ կողմնակիցների նկատմամբ գործադրուած որեւէ բռնութիւն կամ հարկային ծառայութեան որեւէ ապօրինի պատժիչ գործողութիւն դիտուելու է որպէս քաղաքացիների ընտրական իրաւունքի յանցաւոր խախտում, եւ այդպէս էլ ներկայացուելու է ինչպէս մեր հասարակութեանը, այնպէս էլ միջազգային ատենաներին: Թո՛ղ իւրաքանչիւր ոստիկանապետ, թաղապետ կամ հարկահան ականջին օղ անի՝ քաղաքացիների սահմանադրական իրաւունքների դէմ կատարուած որեւէ բռնարարք՝ քրէական յանցագործութիւն է, եւ նրանք վաղ թէ ուշ դատական կարգով պատասխան են տալու օրէնքի առաջ: Այդպիսիների ցուցակն արդէն գլխաւորում են ոստիկանութեան բարձրատիճան պաշտօնեաներ Ալեքսանդր Աֆեանը, Արարատ Մաստիսեանը եւ Ներսէս Նազարեանը, իսկ ցուցակում յայտնուելու յաւակնութիւն ունեն Երեւանի երկու թաղապետ, որոնց անունները, կախուած նրանց հետագայ վարքից, կը հրապարակուեն կամ ոչ յաջորդ հանրահաւաքներում: Հայաստանի ներկայ իշխանութիւններն ապրում են իրենց հոգեվարքը: Ոչնչից մի՛ վախեցէ՛ք: Նրանք աւելի վախեցած են, քան դուք: Վկայ՝ նրանց նեարդային շղագզումները:

1988-ի համագոյն շարժումն ունէր յայտնի մի կարգախօս՝ «Պայքար, պայքար մինչեւ վերջ»: «Վերջի» տակ մենք նկատի ունէինք երկու նպատակ՝ Հայաստանի անկախութեան վերականգնումը եւ Արցախի ազատագրումը, որոնք արդէն իրականութիւն են: Իսկ այսօր, «վերջ» ասելով, մենք պէտք է դնենք երկու այլ նպատակ՝ Հայաստանի սահմանադրական կարգի ու արժանապատուութեան վերականգնումը եւ Արցախի ազատութեան իրաւական (դէժիւրէ) ձեւակերպումը: Ուրեմն՝ Պայքար, պայքար մինչեւ վերջ...

Ս.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿ

Ս.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՄԵԾԱՐԱՆՔ

Շարունակում է իր խօսքը

եան Կուսակցության քայլերգները:

Ընկ. Եթերեան իր խօսքի ընթացքին յայտնեց, որ հաջորդաբար մեծարելու եւ 120-ամեակի յատուկ պատուոյ գիրքը յանձնելու խումբ մը ընկերներու, որոնք իրենց ազգային-հասարակական երկարամեայ գործունէութեամբ մեծ վաստակ եւ ներդրում ունեցած են Հնչակեան Կուսակցութեան կեանքէն ներս:

Բացման իջարկէն ետք, Ընկ. Ստեփան Յովակիմեան ասմունքեց Պարոյր Սեւակի «Մարդ կայ, Մարդ էլ կայ»:

Ապա բեմ հրաւիրուեցաւ հանրածանօթ երգչուհի Անահիտ Ներսիսեան որ երգեց հայրենասիրական գոյգ երգեր, դաշնակի ընկերակցութեամբ Լեւոն Աբրահամեանի:

Օրուայ խորհուրդի մասին ելոյթով հանդէս եկաւ Ս.Դ.Շ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Գրիգոր Խոտանեան:

«Հաւաքուած ենք՝ պատուելու համար ընկերներ, որոնք տասնամեակներով շարունակ ծա-

կելի է եղած անոնց նուիրումը Մայր Կուսակցութեան կեանքէն ներս», - ըսաւ ընկ. Խոտանեան ու աւելցուց. «Հնչակեան Կուսակցութեան գինուորագրուողը փառք ու պատիւ չէ որ կ'ակնկալէ եւ ոչ այլ շահագիտական նպատակներ կը հետապնդէ: Ան գիտէ որ քաղաքական



Ս.Դ.Շ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեան

ու յեղափոխական այս կուսակցութեան ճամբան փշոտ է ու դժուարութիւններով լի: Հնչակեան դառնալը գիտակցուած յանձնարարութիւնն է՝ ազգի ու հայրենիքի ծառայութեան համար:

Այդ յանձնառու կեցուածքներու լաւագոյն օրինակը կը հանդիսանան պատուի արժանացող մեր այս ընկերները»:

Շեշտել է ետք, որ մեծարանքի արժանացող ընկերներու մասին կարճ կենսագրական գիծերը չեն կրնար արդարութիւն ընել անոնց վաստակին, ընկերը յոյս յայտնեց որ անոնց յուշագրութիւնները կը յանձնուին թուղթին, «քանի որ մեր ազգային կեանքի պատմութեան էջերն են, որ պիտի գտնենք այնտեղ»:

Շարունակելով ընկ. Խոտանեան ըսաւ, «Մեր զգացումները խառն են այս երեկոյ: Մենք կը պատուենք նաեւ հարազատ ընկերներ, որոնք մեզ հետ չեն այսօր: Սակայն, իրենց յիշատակը վառ կը մնայ մեր բոլորի մտքերուն ու սիրտերուն մէջ: Իրենց ընդմէջէն մենք կ'ուզենք պատուել նաեւ մեր

բոլոր ողբացեալ ընկերները ու ըսել անոնց որ, մենք կը մնանք հաւատարիմ Մայր Կուսակցութեան գաղափարախօսութեան եւ կը մնանք իրենց գործը շարունակողները ու կը խոստանանք Հնչակեան դրօշը

գելու յիշատակը՝ յետ մահու «120-Ամեակի Պատուոյ Գիրքի» արժանացող ընկերներուն:

Բեմ հրաւիրուեցաւ Ս.Դ.Շ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեան:



հանրածանօթ երգչուհի Անահիտ Ներսիսեան դաշնակի ընկերակցութեամբ Լեւոն Աբրահամեանի

միշտ բարձր պահելով զայն փոխանցել սերունդէ-սերունդ: Այդ սերնդափոխութեան մէկ վառ օրինակը ունեցանք նաեւ մի քանի օր առաջ այս նոյն յարկէն ներս, երբ 25 երիտասարդներ, Հնչակեան դրօշին վրայ կատարելով իրենց երդումը, եկան միանալու Նազարբէկեաններու, Մեծն Մուրատներու եւ Փարամպներու կուսակցութեան:

Կուսակցութեան ջանք վառ կը մնայ նաեւ Հայրենիքէն ներս, ուր հարիւրաւոր երիտասարդներ նոր ծանօթանալով Հնչակեանութեան ու անոր նպատակներուն սկսած են գործել մեր շարքերէն ներս, դառնալով մեր պարծանքը ու օրինակ դառնալով Հայաստանի երիտասարդական այլ կազմակերպութիւններուն»:

«Այս բոլորը կու գան փաստելու որ Հնչակեան Կուսակցութիւնը 120 տարեկան երիտասարդ է, եւ կոչուած է երկար տարիներ եւս շարունակելու իր առաքելութիւնը՝ յանուն հայապահպանութեան, Հայկական դատի հետապնդման, հայ ժողովուրդի բարգաւաճման եւ հայրենիքի հզօրացման», եզրակացուց ընկ. Գրիգոր Խոտանեան:

Պարգևատրման արարողութեան անմիջապէս առաջ ներկաները հրաւիրուեցան յոտնկայս յար-

Մէկ առ մէկ իւրաքանչիւրի կենսագրական գիծերը ներկայացուելէ ետք ընկ. Աճէմեանի ձեռամբ յանձնուեցան յատուկ վկայագիրները:

Յետ մահու պատուոյ գիրք յանձնուեցան Ընկերներ՝ Գրիգոր Լաչինեանի, Գրիգոր Գոնտուրալեանի եւ Գէորգ Սամուէլեանի հարազատներուն:

Պատուոյ գիրքը յանձնուեցան նաեւ ընկերներ՝ Գաբրիէլ Մոլոյեանին, Արշակ Գազանճեանին, Յարութիւն Սաղրեանին, Կարապետ Եաղսգեանին, Հէրրի Տրամէրեանին եւ Օթէնի Պարսումեանին: Իւրաքանչիւրը ստանալէ ետք իր վկայագիրը, հանդէս եկաւ շնորհակալական սրտի խօսքով:

Երեկոյի փակման խօսքը կատարելով ընկ. Սեդրակ Աճէմեան յանուն Կեդրոնական Վարչութեան շնորհակարան մեծարանքի արժանացող ընկերները, անոնց մաղթելով առաւել կորով իրենց հետագայ գործունէութեան մէջ:

Հանդիսութեան պաշտօնական մասը վերջ գտաւ «Տուր Զեռքը Ընկեր» Հնչակեան մաղթերգով, որուն յաջորդեցին ընկերային ժամ եւ ճոխ հիւրասիրութիւն:

Photos by Karin Bekarian



Ընկ. Ստեփան Յովակիմեան

ուայած են որպէս թերթերու խմբագիրներ, դպրոցներու ուսուցիչներ, մարզական եւ սկստական խումբերու ղեկավարներ: Արդարեւ՝ մեծ է եղած այս ընկերներու վաստակը, երկարատեւ է եղած անոնց ներդրումը, անսակարկ է եղած անոնց գոհաբերութիւնը ու օրինա-

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԵԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԵԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԵՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

DISTRICT 2 TOWN HALL MEETING
Join Council Member MARGARET MCAUSTIN
for a conversation about important issues facing Pasadena

The Future of the Rose Bowl
Now that voters have said no to the NFL, what's in the future for the Rose Bowl?
Special Guest Speaker Darryl Dunn, General Manager of the Rose Bowl

Violence in Our Community
Learn what the city is doing to try and stem the problem of violence that has plagued our community.

Utility Users Tax Update
Why this money is vital to the City's General Fund.

Wednesday, November 7th
1001 Rose Bowl Drive
6 p.m.–Tour of Rose Bowl, Media Center & Locker Rooms
6:30 to 8:30–Program and Q&A in Media Center
(Park as close as you can to the Rose Bowl sign, the guard at the gate will direct you to the meeting.)

For more information call 744-4742 or mfuller@cityofpasadena.net

Massis Weekly

Volume 27, No. 39

Saturday, NOVEMBER 3, 2007

Ter-Petrosian Declares Presidential Bid In Yerevan Rally Armenia's Current Leadership Is A "Criminal Regime Which Is Corrupt From Top Down"

YEREVAN -- Former President Levon Ter-Petrosian completed his political comeback late last Friday with an emphatic announcement of his participation in the forthcoming presidential elections made in front of more than 20,000 people attending his first rally in more than a decade.

In a 90-minute speech in Yerevan's Liberty Square, he reiterated his fierce criticism of Armenia's current leadership, again describing it as a "criminal regime which is corrupt from top down." Ter-Petrosian also said that President Robert Kocharian and Prime Minister Serzh Sarkisian now accept the kind of a resolution of the Nagorno-Karabakh which he advocated in 1997-1998 and which they rejected as "defeatist."

"I intended to make my final decision on the eve of the start of the electoral process," Ter-Petrosian told the crowd that repeatedly interrupted the speech with "Levon! Levon!" chants. "However, repressions which the authorities unleashed against my supporters recently as well as the huge energy of this rally make that decision urgent. Therefore, from now on I declare myself a candidate to the presidency of the Republic of Armenia."

"From now on, any repression or any act of terror by tax bodies against my supporters will be deemed a criminal violation of the electoral rights of citizens and will be presented as such to both our public and international bodies," he added to rapturous applause.

Ter-Petrosian spent four hours at a police station in Yerevan earlier this week negotiating the release of a dozen loyalists arrested on Tuesday while publicizing his rally. His sup-

porters say the "illegal" police actions testify to growing government fear of his presidential bid. The strong attendance of the rally will reinforce their belief that he will be Sarkisian's main challenger in the elections due in February or March and can defeat Kocharian's preferred successor.

As was the case during his previous public speech made on September 21, Ter-Petrosian did not mince words to express his attitude towards the country's current leaders, saying that their power is based on tight control of the security apparatus, the judicial system and electronic media as well as an "atmosphere of fear." "For them the homeland is a conquered territory or business entity," he charged.

Ter-Petrosian elaborated on this claim by accusing Kocharian, Sarkisian and their inner circle of personally controlling the most lucrative forms of economic activity through direct ownership of business or "state racketeering." "The three main principles of the capitalist or market-based economy have been breached: creating equal opportunities, ensuring fair competition and protecting private property," he said.

"Otherwise, in which other country can an ordinary bus driver get so rich in one or two years that he is able to make tens of millions of dollars in investments not in his native Artsakh (Karabakh) but in the United States of America? Or how can a 25-year-old



Former President Levon Ter-Petrosian during Yerevan rally

young man become one of Armenia's ten wealthiest businessmen just two or three years after graduating from university?" he asked, clearly referring to Sarkisian's controversial brother Aleksandr and Kocharian's son Sedrak.

"In the last five years, the criminal regime has stolen at least three to four billion dollars from the people," he charged. "If that sum had been invested in Armenia we would have had a qualitatively different country. If it had been invested in Artsakh it would have already been independent."

Ter-Petrosian went on to dismiss as fraudulent official statistics that show the Armenian economy expanding at a double-digit rate for the past six years. He said economic growth has been much slower and has largely resulted from remittances from hundreds of thousands of Armenians living abroad. He went on to slam Yerevan-based representatives of the World Bank and the International Monetary Fund for regularly praising the Kocharian administration's economic track record. He claimed that they are

Continued on page 4

Congressional Sponsors Postpone Push For Armenian Genocide Bill

WASHINGTON, DC -- Backers of a resolution to formally name the 1915 massacre of Armenians by Ottoman Turks a genocide said last Thursday they would postpone efforts to bring it to a vote in the U.S. House of Representatives.

The sponsors conveyed their decision in a letter to House Speaker Nancy Pelosi, after support for the resolution support faltered in the face of vehement protests from Turkey and the Bush administration.

But the four chief co-sponsors who wrote the letter did not totally give up on the proposal, which Armenian-Americans have sought to pass in the House for years but is strongly opposed by the Bush administration. The sponsors asked Pelosi not to schedule a vote "at this time," but said they would continue to work for "consideration sometime later this year, or in 2008."

The resolution passed the House Foreign Affairs Committee on Oct. 10 and seemed destined for speedy consideration by the whole House of Representatives.

"We believe that a large majority of our colleagues want to support a resolution recognizing the genocide on the House floor and that they will do so, provided the timing is more favorable," said the letter to Pelosi, which her office released.

It was signed by four Democrats who were leading sponsors of the resolution—Adam Schiff, Brad Sherman and Anna Eshoo of California, and Frank Pallone of New Jersey.

A Pelosi spokesman said she respected the judgment of the sponsors on the timing of the vote. She has long advocated passage of such a resolution.

Police Press Charges Against Ter-Petrosian Supporters

YEREVAN -- The Armenian police on Tuesday formally charged two newspaper editors and three other opposition activists who were detained last week while urging Yerevan residents to attend former President Levon Ter-Petrosian's landmark rally.

The activists were summoned to the police department of Yerevan's central Kentron district for questioning. Only one of them, Shogher Matevosian of the pro-opposition "Chorrord Ishkhanutyun" newspaper, promptly went there to find out that she has been charged with assaulting a policeman during the incident.

Matevosian was among several dozen Ter-Petrosian loyalists who marched through the city center on October 23 to publicize Friday's rally. Eleven of them, including another newspaper editor, were detained on the spot

after defying police orders to stop the action. They were released the next morning after overnight negotiations between Ter-Petrosian and senior police officers.

The oppositionists, most of them leaders of the radical Aylentrak (Alternative) movement, say that the march was sanctioned by municipal authorities and that the police actions were therefore illegal. The police claim, however, that the marchers interfered with car traffic and disrupted public order by littering the streets with leaflets and disturbing residents. They also say that several police officers were injured by demonstrators.

According to Matevosian's lawyer Hovik Arsenian, the outspoken editor is accused of hitting and injuring

Continued on page 4

Karabakh Mediators Hold More Talks In Yerevan And Baku

International mediators continued to shuttle between Armenia and Azerbaijan at the weekend in hopes of brokering what a senior U.S. diplomat described as a "gentlemen's agreement" on the main principles of the Nagorno-Karabakh conflict's settlement.

The American, French and Russian co-chairs of the OSCE Minsk Group arrived in Yerevan and held fresh talks with Robert Kocharian and Foreign Minister Vartan Oskanian on Saturday before heading back to Baku. They already visited the two capitals earlier last week.

Speaking to RFE/RL, the group's U.S. co-chair, Deputy Assistant Secretary of State Matthew Bryza, said the mediators remain in the conflict zone to try to "build on some positive momentum." He said they will convey to Armenian leaders an "important message" from Baku but refused to disclose it.



American, French and Russian co-chairs of the OSCE Minsk Group

Bryza again insisted that Armenia and Azerbaijan may still cut a framework peace deal before their presidential elections due next year. "We can't exclude the possibility that we will reach a gentlemen's agreement," he said. "But that would be an oral statement. We are

Continued on page 4

Both in public and in private, one question has dominated conversations in Armenia over the past month: Will Levon Ter-Petrosian's return to politics prove a true comeback?

While Ter-Petrosian's chances for success in next year's presidential elections remain uncertain, an upsurge of popular interest in the 62-year-old ex-president and support for his reelection campaign suggest that Armenia's political field is changing fast.

"He is the most pivotal statesman and politician in Armenia's political life and has no competitors in this sense," argued political analyst Suren Sureniants, a member of the political council of the opposition Republic (Hanrapetutun) Party.

Charisma, intellect and hands-on experience are the attributes used to tout Ter-Petrosian, yet no opinion polls have been taken on how voters compare these attributes with those of Prime Minister Serzh Sarkisian, the government's projected presidential candidate. Aharon Adibekian, the head of the independent polling center Sociometer, said that a survey run in January 2007 gave the former president a "rather low" assessment, but added that "everything is still ahead and we cannot draw a conclusion yet." Polls on the question are expected "in the near future," he said.

For now, though, the lack of hard data to back up their hopes for a Ter-Petrosian win does not disturb the opposition. Reactions to Ter-Petrosian's candidacy may vary, commented Sureniants,

Ter-Petrosian: Is Armenia Ready For A Comeback?

By Marianna Grigoryan



Ter-Petrosian supporters waving flags during the Yerevan rally

but, for the opposition, the ex-president's return to politics "is perhaps an exclusive chance to get noticed."

The October 26 demonstration at which Ter-Petrosian announced his candidacy arguably marked the beginning of a new period for the opposition, elaborated one rank-and-file supporter. "I think that was an historical moment," translator Hakob Mkrtchian said. "We have waited long for him to return to politics. I think his statement opened a

new page in Armenia's dull political life." Sixty-year-old doctor Laura Harutiunian agreed. With a candidate that has "the respect of many intellectuals," she said, voters can "finally make a choice."

"I think that a new opposition movement has been formed and consolidated around Levon Ter-Petrosian and, if it takes more actions in the future, it will convince many to follow," said pro-opposition columnist Tigran Paskevichian.

A first step should be deciding on a response to what the opposition terms a "news blockade" by public television and other television stations against stories about Ter-Petrosian's campaign and the October 26 rally, Paskevichian said.

Many supporters agree. A report by public television about the demonstration showed the square in downtown Yerevan where thousands had gathered to hear Ter-Petrosian speak as "half-empty," related teacher Narine Hakobian, who attended the rally. "The report alternated with black-and-white footage showing 'what terrible years we had' under the first president. What is being done by the authorities is not honest, I think."

One public television employee has dismissed the criticism. "And why should public TV show what you want? Our camera showed what was taking place," asserted Haroutiun Haroutiunian, director of Armenian Public Television's Haylur news program.

Political analyst Alexander Iskandarian, however, contends that a television blockade will have little effect on Ter-Petrosian's campaign.

"If the authorities try their chances with television broadcasts, which is not ruled out, then the struggle will pass to the streets. The field of struggle will be through public rallies," he said. "And in that field, Ter-Petrosian feels quite confident, as he is an experienced public figure."

Continued on page 4

In unprecedented outcry over the adoption of Resolution 106 by the House of Representatives Foreign Affairs Committee, Ankara threatens American military efforts in Iraq. A new parliamentary motion allows large scale incursions against Kurdish insurgents in Northern Iraq. At the same time, Ankara threatens to deny the American military logistical access through the Incirlik air base in Turkey.

Turkey's angry response to the committee's adoption of the Armenian Genocide resolution was headline news for days, followed by a weekend of watching some lawmakers distance themselves from the significant document.

It now appears that the U.S. Administration's opposition, coupled with an expensive lobbying campaign by Turkey, is likely to dissuade lawmaker's from bringing the resolution to the floor of the House of Representatives. Their efforts have intensified as an increasing number of opposition opinions are being expressed in the U.S. which may result in the resolution not being brought to the floor for a vote.

Whatever the final outcome of the genocide resolution in Congress, Turkey's outrage and threats do little to advance its aim of joining the European Union. Nor does its action sit well with Americans who do not take kindly to threats and political blackmail.

It is interesting that even the most vociferous opponents of the resolution avoid denying the truth that the horrific actions of the Ottomans in 1915 constituted Genocide. They only argue that Congress is not the place to make that judgment, especially since this is a sensitive issue with an important ally. But even they are uncomfort-

Commentary: Turkey's HR106 Backlash Weakens Its Own International Causes

By Jirair Haratunian

able supporting a genocide denial campaign over a non-binding congressional resolution. Turkey remains suspect as a reliable ally because Americans have not forgotten Turkey's last minute refusal to allow U.S. troops to enter Iraq through Turkey during the invasion of that country in March 2003. Confidence in Turkey was shaken then, and is undoubtedly still in doubt in Washington, despite all the platitudes being expressed today by the White House and the Pentagon.

One extra measure of annoyance toward Turkey has been Ankara's surprising accusations that Israel has betrayed Turkey's friendship by not reigning in American-Jewish groups from endorsing the recognition of the Armenian Genocide. Not long ago, open controversy about the subject erupted in Massachusetts within the leadership of the Anti-Defamation League whose President first demeaned the reality of the Armenian Genocide, and then retreated, stating that the horrors that befell the Armenians in the Ottoman Empire was tantamount to Genocide. Even his opposition to the passage of Resolution 106 was rebuffed by Turkey.

All the fuss and threats by Turkey are clearly the last gasps of a lost cause. Whether or not the resolution is ultimately enacted by Congress, the reality of the Armenian Genocide has been confirmed by world public opinion.

In an address to the Second Convention of European Armenian Orga-

nizations on October 15, Armenia's Foreign Minister Vartan Oskanian recalled Turkey's lost opportunities to mitigate its strained relations with Armenia. He said in part, "when independence came to all the Soviet republics, including Armenia, Turkey ignored a huge opportunity for a new start. Turkey refused to establish diplomatic relations with Armenia, and two years later closed the border hoping that Armenia's vulnerability and fragile statehood would force it to renounce its past and with it, any possible claims for compensation."

Today in Turkey, the son of murdered Armenian publisher of the Agos newspaper Hrant Dink, has been convicted under Article 301 of the Turkish Penal Code for reprinting the interview of his father who asserted that it was Genocide that befell the Armenians of Eastern Anatolia. Turkey has thus moved from its claim of being victim of the Armenian Lobby to its more historic role of bullying Armenians within its borders.

Տարիներ առաջ, երեւանի հիւրանոցում, շուկայից ծանօթ մի կնոջ հետ Աւետիքը հրաշք գիշեր անցկացրեց: Կատաղի, փորձուած կին էր, չէր բաւարարում Աւետիքի սիրոյ գիտելիքներով, քրքրում էր չղիկուած, եւ, ուրեմն, կատարելութեան հասած նրա գգուններին վրայ: Սկսեց դաս տալ: Հրաշք գիշերուայ առաջին կէսը ուսուցողական ստացուեց, երկրորդը՝ քննական: Դասընթացը յաջող աւարտելու կապակցութեամբ մի վերջին, արդէն քույրական համբոյր ստանալով, Աւետիքը տուն դարձաւ սիրոյ փորձի վիթխարի պաշարով եւ, բնականաբար, փորձն անյապաղ իրագործելու վճռականութեամբ, բայց անկողին մտնելուց առաջ Շամամն ամենայն մանրամասնութեամբ պատմեց նախորդ գիշերուայ իր երազը, որը, ի սարսափ Աւետիքի, հիւրանոցային հրաշք գիշերուայ ճշգրիտ նկարագրութիւնն էր: Աւետիքն, ի հարկէ, ծաղրեց կնոջ անհեթեթ երազը, երեւոյթը բացատրելով խանդով, վախով, իսկ հոգու խորքում՝ խորհրդաւոր ուժերի նկատմամբ ծնուած սարսափի հետ, շոշափեց նաեւ կորստի ցաւը. ստիպուած էր մոռացութեան տալ ձեռքբերուածը: Որպէսզի չմատնուի, Շամամի անկողնում նա, ի վերջոյ, ստրուկ դարձաւ:

Մինչ Աւետիքը, գսպելով ծնկների դողը, յիշում էր անցածը, Շամամը հասցրեց շշպուել նաեւ Արուսին: Բոլոր որբեւայրիների նման, Արուսը գիտէր տղամարդու յարգը եւ, իր ոչ հեռաւոր անցեալը մոռացած, խրախուսում էր, երբ մարդատէր հարեւանուհիներից մէկը նեղում էր ամուսնուն: Ահա թէ

ինչու նա փոքր-ինչ կշտամբանքով ասաց Շամամին.

- Ես կ'աւելեմ մայթը, Շամամ: - Մաքրող ես, - տրաքեց Շամամը, - զնա քո... բակի կեղտերը մաքրի: - Անհրաժեշտ տեղում կարճ դադար տալով եւ վարպետորէն ձայնն իջեցնելով, Շամամը խօսքից գրեթէ դուրս մղեց վիրաւորանքի հարուածը մեղմող բառը, միաժամանակ իր համար ապահովելով մեղադրանքից խուսափելու վիճակ. «Ես բակիդ կեղտից էի խօսում, իմ ի՞նչ գործն է՝ խառնուել քո կեղտերին: Եւ յետոյ, Արուս աղջիկ, ստի չես կերել, սիրտդ ինչու՞ է մրմռում»:

«Վա՛յ ես քո վհուկ ծնողը...», - մտքում հայհոյեց Աւետիքն ու կատաղի թափ տուեց հերթական ճիւղը, առանց ստուգելու՝ չարսաւր պատրաստ է ընդունելու քաղցր կարկուտը: Պատրաստ չէր, թթի մեծ մասը թափուեց մայթին, եւ դրանց ճիւղուելը տղամարդկանց յիշեցրեց կանանց հետ իրենց կուրուների վերջնամասը, երբ լեզուից խեղճացած, տրամաբանութիւնը խաթարուած, բուռնցքիդ առաջմղումը մի կերպ գսպելով, յատակին ես գարկում առաջին իսկ պատահած իրը: Փշրուածքի տեսքը եւ փշրումի ձայնը մոգական ազդեցութիւն են թողնում կանանց վրայ: Աշխարհում դեռ ոչ մի գազազած կին չի շարունակել ճղճողը՝ ոտքերի տակ տեսնելով փշրանքներ: Ճղճողն իսկոյն փոխվում է լացի, բայց ոչ՝ ափսոսանքի, թէեւ արցունքների միջից կինը, հնարավոր է, կողբայ թանկարժէք իրի կորուստը նաեւ: Նա վախից է լալիս: Փշրուածքի տեսքը նա ընկալում է որպէս ճակատագրի սպառնալիք՝ ահա այդպէս էլ փշուր-փշուր կը լինի երջանկութիւնը: Եւ, առհասարակ, կնոջ բնոյթը դէմ է փշրումին...

Շամամը երկու ձեռքով չանչեց ամուսնու, նույնն է թէ՛ Աստծոյ ուղղութեամբ, Արուսից բացի, բոլորը միջադէպը հարթուած համարելով, ծիծաղեցին եւ ծիծաղի մէջ չնկատեցին էլ, թէ ինչպէս յայտնուեց այդ տարօրինակ ծերունին:

Խեղճ, բայց եւ մարտական կեցուածք ունէր նա: Աչքերն այնքան ջահել էին, որ յարմար չէին գալիս ճերմակ մօրուքին, ասես տարեց դերասան չունեցող գաւառական թատրոնը անյաջող կեղծամով պատանեակ էր բեմ հանել: Նա կամ անցած դարերից ճամբայ ընկած դերուիչ էր, կամ՝ մեղր ծախող, բայց անցած դարերից ճամբայ ընկածները գերեզմաններում էին, ուրեմն՝ մեղր ծախող էր, մանաւանդ շալակի բերանփակ տոպրակը կճուճ կուլ տուածի պէս էր եւ քաղցրութիւն էր բուրում, այլապէս՝ ինչու՞ էին ճանճերը, բուռերը, թողած այգի-բոստան, յարձակուել խեղճ հալիւորի վրայ:

- Մարեակներն ո՞ւր են, - հարցրեց ծերունին՝ անսպասելի այս հարցով աւելի շփոթեցնելով հարեւաններին: Խօսքները մէկ արած, նրանք բաց թողեցին չարսաւր, եւ թթի բլուրը ցցուեց մայթին: Բզզացող ճանճապսակը ցրել եկաւ ծերունու գլխավերեւում եւ իսկոյն էլ, ճիշտ նոյն չափով ու բզզիւնով, վերադասաւորուեց թթի բլրի շուրջ:

Ճիւղից ճիւղ իջնելով, ցածի ճիւղից կախուելով, Աւետիքը ճօճուեց փոքր-ինչ ու թռաւ ուղիղ ծերունու դիմաց, որն, արեւմուտքի վերջին առկայծումից աչքերը կկոցած, դեռ յոյս ունէր, թէ թթեւու վրայ սարեակ կը յայտնաբերի:

- Ի՞նչ սարեակ, - հեւցով հարցրեց Աւետիքը: Տանտիրոջ բնագղը յուշել էր՝ դրութեան տէր կանգնել:

- Թթի դէրը, - բացատրեց ծերունին, շալակից վար բերեց տոպրակը: - Ոչ մի ծառի վրայ սարեակ չտեսայ:

Ծերունուն ամէնից ուշ նկատել էր Արուսը. գլուխը քարշ, վիրաւորանքից ատամները կրճատացնելով, նա աչքի պոչով թէեւ տեսել էր անծանօթին, նոյնիսկ հասցրել նմանեցնել նրան իրիմեան Հայրիկին, որի մեծագիր լուսանկարը գնել էր էջմիածնի մայր տաճարից, բայց քանի դեռ ուղեղում շարժում էր

Շար.ը էջ 19

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
Վ Ի Գ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն
Ի նպաստ
Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին
Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350
Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան
Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ
Գ. Պարգել՝ 42" Plasma TV
Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ
Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00իւ
Verdugo Hills Country Club
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202
Նոր Հաճնը Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով
Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՍ ԶԵՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆ ԵՄ

Շարունակում էք 18-էն

վրեժխնդրութեան որդը, ծերուկը նրա համար կիսամոռացուած երազ էր, որին պիտի անդրադառնար յետոյ: Շամամի խայթոցի ետեւից վազելով, կանացի նրա հոտառութիւնը յայտնաբերել էր իր իսկ ստեղծած մագնիսական դաշտը, որտեղ ընկած տղամարդը, ինչ տարիքի էլ լինի, դառնում է պատանի: Կարող էր, չէ՞, Աւետիքը հանգիստ, տարիքին պատշաճ գոլշուրթեամբ, շարժուածեով իջնել ծառից: Չէ, արիւնը եռում էր՝ թռաւ: Եւ ինչ աղերսանքով կանչեց վերից՝ «Արուս...»: «Ջան...», - ուշացած պատասխանեց նա Աւետիքին ու էլի ուշացած «չոռ ու ցաւ» ուղարկեց նրա կողակցին:

- Պարսկաստանից որ մորեխը գայ, ի՞նչ էք անելու, - հարցրեց ծերունիին:

Չէ, նա դերուիչ չէր, մեղր ծախող չէր: Նա խենթ էր: Յամենայն դէպս, Աւետիքը խղճաց նրան ու փորձում էր որսալ Շամամի հայեացքը, որ աչք-ունքով հասկացնէր՝ բանալ հնոտիների սնտուկը, մառանի դուռը, շորից-ուտեւիքից բաժին հանել մարդուն: Նաեւ հարկ համարեց տեղեկացնել, որ Պարսկաստանը վաղուց ի վեր այս կողմ այլեւս ոչ մորեխ է համարձակուում ուղարկել, ոչ առաւել եւս՝ փրկ:

- Աշխարհը փոխուել է, - եզրափակեց նա:

- Հիմա մենք թէ՛ միջատասպան թոյն սրսկող ինքնաթիռ ունենք, թէ՛ տանկ:

Նա գոհ-գոհ նայեց հարեւաններին՝ իբր ձեր անունից էլ սասացի, ու բան է, եթէ ոչ դերուիչ է, ոչ մեղր ծախող եւ ոչ էլ անվնաս խենթ, այլ, սանք, որեւէ մեծ տէրութեան լրտես, կամ, որ աւելի վատ՝ խօսք քաշող մի տականք, եկել, մեր յուսալիութիւնն է փորձում, ապա թող հենց այդպէս էլ գրանցի՝ մենք թէ՛ միջատասպան թոյն սրսկող ինքնաթիռ ունենք, թէ՛ տանկ... Անցեալ տարի չձերբակալեցի՞նք ասորբորգի Շահնիւն: Անգլիական լրտես էր, թէ ինչ էր, բայց մեքենայի արագութեամբ էր բազմապատկում ռուբլի կոպեկները մեթր սանտիմետրերի, կիլոգրամ գրամների հետ: Խանութի երկար սրահի մի ծայրում ինքն էր աշխատում, միւսում՝ կինը: «Շահնիւն, - իր անկիւնից բղբուում էր կինը, - ինձի լսէ, Շահնիւն... Ընկեր վաչագանի տիկին Մաղիլը դատեր Վարսանիքի համար 17 ու. 48 կոպեկանոց կտորից 4 մեթր ու կէս պիտի առնի»: Յաճախորդները եւ երեխաները, որ մաթեմատիկայի դասերից փախչելով՝ յատկապէս գալիս էին կայծակնային բազմապատկմանը ներկայ լինելու, դեռ հասցրած չէին լինում գլուխները Շահնիւնի կողմը շրջել, երբ գալիս էր պատասխանը: Լրտեսութեան հետ նա, ի հարկէ, կապ չուներ, պարզապէս կայծակնային բազմապատկման նրա շնորհքը, ինչպէս ամէն շնորհք, տարիների հետ մաշուել էր, ճաքճքել, եւ այդ ճաքճեղքերից դուրս էին գլորուել կոպէկ-ռուբլիներ, որոնց գումարը դասական դանդաղկոտութեամբ հաշուեց Երեւանից ժամանած յանձնաժողովը: Ժողովուրդն էլ չէ՞ որ շատ հետաքրքիր հաւաքակառուցութիւն է, հիասթափուեց խեղճ մարդոց: Բայց ոչ թէ նրա համար, որ սխալ հաշիւներ էր արել, այլ՝ որովհետեւ լրտես չէր: Քանի-

քանի մարդ էր մասնակցել նրա շուրջ պատմուող առասպելների ստեղծմանը: Ի հարկէ, կը հիասթափուէին: Ոնց որ՝ վարես, ցանես, ջրես, ու աշնանը հեղեղը գայ՝ բերքը տանի: Ինչեւէ, եթէ Շահնիւն լրտես չէր, չի՞ նշանակում, թէ առհասարակ լրտեսներ չկան: Եւ կամ՝ տականքներ:

Շամամը ծերունուն բակ առաջնորդեց՝ թանով հիւրասիրելու, յետոյ ետ դարձաւ, կճուճ կուլ տուածի պէս կլոր տոպրակը տարաւ՝ խեթ-խեթ նայելով Արուսին, որը պոպոկ, թուր էր լցնում տնից հետո բերած թասը, ու, իբր համակ ուշադրութիւն դառած, լսում էր թիկ-թակ Ստեփանին: Ժամագործի արուեստը կէսփիլիսոփայութիւն է, որովհետեւ՝ ուզես թէ չուզես, գործ ունես փիլիսոփայութեան ամենաբարդ խնդրի՝ ժամանակի հետ: Թիկ-թակ Ստեփանի արտասանած բոլոր նախադասութիւնները կամ հարց էին պարունակում, կամ պատասխան:

- Ինչի՞ց են մարդիկ խենթանում, - հարեւաններին հարցրել էր թիկ-թակ Ստեփանը եւ ինքն էլ շտապել էր պատասխանել: - Որովհետեւ՝ մարդու ուղեղն էլ մեխանիզմ է: Շարժուել՝ նշանակում է շփուել, իսկ շփուելուց մաշուում է ամէն ինչ:

- Ով խենթ չի, - ասաց Արուսը, - նրա ուղեղը չի գործում, հա՞:

- Վերջին հաշուով՝ հա, - պատասխանեց թիկ-թակ Ստեփանը: - Որովհետեւ թոյլ, ծոյլ գործելը նոյնպէս անգործութիւն է: Եթէ կարգին գործի՝ կը մաշուի: Ինձ յայտնի միակ չմաշուող բանը ժամանակն է:

- Շոգ գիշեր է լինելու, - երգելու պէս ասաց Արուսը, - դրսում քնելու գիշեր է:

- Հա՞, - կասկածեց Աւետիքը, նայեց երկնքին ու իսկոյն էլ հասկացաւ, որ սխալ ուղղութեամբ է նայում, իսկ երբ ուղղեց հայեացքը, աչքերի առջեւ նկարուեց մթութեան մեջ հագիւ ծփացող ճերմակ շղարշը, որի մի փէշը ներքնակի տակ չէր խոթած, ազատ ծածանում էր, ծալում վեր՝ ցուցադրելով Արուսի կանչող ձեռքը:

- Հա, - ասաց Արուսը, - ցերեկուայ ժամանակն անցաւ, գիշերուայ ժամանակն էլ կ'անցնի, ու վաղը կը սկսուի նոր ժամանակ: Եթէ ուզում ես իմանալ, թիկ-թակ Ստեփան, աւելի շուտ մաշուող բան, քան ժամանակն է, չկայ:

Աւետիքը բոլորի նման գլուխը չթեքեց, որ տեսնի, թէ ինչ շորորանքով ու խաղացիկուն է քայլում Արուսը: Թիկուները դէմ արած էր կանգնել, բայց ինչ հրաշք սեւեռում էր՝ թիկուները, թէ՞ ողջ մարմինը դարձել էր մի մեծ ականջ, լսում էր կանացի հողաթափերի հեռացող քստքստոցը... Քառասունվեց քայլ... Քառասունվեց քայլ մինչեւ ցանկապատի դռնակը... «Դրան ճոռոցն ականջը չի խարտում», - հանդիմանեց Աւետիքը, - մօտը մարդ ես հրաւիրում, մի պուտ ձէթն ի՞նչ է, քսիք, էլի...»

Նա նստեց յաւերժական ժամանակի մէջ թուր ուտող հարեւանների կողքին ու իսկոյն էլ ոտքի ելաւ: Առանձնութիւն էր ուզում հոգին, իսկ մարմինը՝ մաքրուել: Առաւօտից արեւի տակ դոյլերով ջուր էր դրուած. կը հանուի, կը կանգնի ստիւի չորացած մարդի թմբին ու գլխին կը լցնի արեւահամ ջուրը: Թէ ինքը կը մաքրուի

քրտինքից, թէ ճլորած սոխերը կը ջրուեն:

- Գնամ, տեսնեմ՝ ինչով եմ պատուելու, - արդարանալու նման ասաց նա: - Հիւրն Աստուած է ուղարկում:

«Աստուծոյ ուղարկածը» յարմար բազմել էր թախտին, չոր լաւաշ էր բրդում մածնաթանի մէջ: Մետաղեայ գդալը դուրը չէր եկել, տանտիրուհուն պատուիրել էր փայտից տաշածը ճարել, իսկ Շամամը չէր յիշում, թէ որ գրողի ծոցն է գցել գործածութիւնից հանած այդ գդալները: Պահարանում չկար, ճաշանդանի դարակում չկար, եղածը ճաք տուած մի շերեփ էր, բայց Տօ շերեփը չէ՞ր տալու հիւրի ձեռքը:

- Չունենք, - ասաց Շամամը:

- Ունէինք, հիմա չունենք:

- Չունենք, չունենք, - փնթփնթաց ծերունին: - Սարեակ չունէք, փայտեայ գդալ չունէք...

Աւետիքը ուզում էր յուշել Շամամին, թէ որտեղ փնտրի գդալները, նոյնիսկ, ինքն էլ մտադիր էր խոռոչտորել քաղաքային թոռան խաղալիքների արկղը, բայց ծերունի փնթփնթոցի վրայ այնպէս գայրացաւ, որ, մոռանալով ամէն պարկեշտութիւն, բղբուեց.

- Ախր, դու ո՞վ ես, է...

- Ես ձեր յիշողութիւնն եմ, - շատ խաղաղ ասաց ծերունին ու մատները խրեց մածնաբրդոյ մէջ:

- Ձեր կորցրած յիշողութիւնը: Ոչինչ, - աւելացրեց, - մատներով կ'ուտեմ:

- Հա՞, - ծիծաղեց Աւետիքը, վճռեց խաղալ, նստեց ծերունու կողքին: - Ամէնից շատ ո՞ր կերակուրն եմ սիրում: Գիտե՞ս: Մոռացել եմ:

- Երեխայ ժամանակ ծիրանի չրով ճաշ էիր սիրում, - առանց մտածելու պատասխանեց ծերունին: - Հիմա ոչինչ էլ չես սիրում: Ինչ տան՝ կ'ուտես:

- Ճիշտ է, - խնդաց Աւետիքը ու ձայն տուեց կնոջը: - Ծիրանի չիր ունե՞ս:

- Ինչն է շատ՝ չիրը, - ծաղրեց Շամամը: - Կտրտածդ ամէն ծառից երկու փութ չիր եմ փուել կտրանը:

- Բա ինչո՞ւ չես եփում, - ծաղրն ականջի ետեւ գցեց Աւետիքը: - Հրես իմ յիշողութիւնը պնդում է, որ ես ծիրանի չրով կերակուր եմ սիրում: Մոխեռածով, չէ՞, - աւելի շատ Շամամի ջիգրու, հարցրեց Աւետիքը:

- Մոխեռածով, - հաստատեց ծերունին: - Իւղը՝ շատ:

- Մոխը կայ, - էլի Շամամի համար ասաց Աւետիքը, - եւ շատ: Աշնանը կը հանենք գլուխ-գլուխ ստիւր, կը պահենք մինչեւ խոր ձմեռ: Հենց շուկայում թանկութիւն ընկաւ՝ ստիւր կը դառնայ ծիրան, իւղ, այսինքն՝ ծիրանի չրով կերակուր, սոխեռածով:

- Ոնց որ անցեալ տարուայ սխտորը, - քթի տակ, հայհոյանքի նման վրայ բերեց Շամամը:

- Ժանտախտի օրերին, - մտքերից չկտրուելով շարունակեց ծերունին, - յիշու՞մ ես, ծիրանի չրով ճաշ էիք ուտում:

- Բուժիչ է, հա՞, - ինքն իրեն աչքով արեց Աւետիքը: - Բա

ասում են՝ ամենաբուժիչը ստին է: Ես էլ չիմարի պէս հաւատացի ու կտրատեցի բոլոր ծառերը, որ ստի ցանեմ:

- Բուժիչը Գեղարզն է, - ասաց ծերունին: - Չէ՞ս յիշում, Գեղարզով թաթախուած ջուրը քսում էին երեսիդ: Իգուր էլ քսում էին՝ ձեր տան դրանը ցասմանացհոգին կարմիր նշան էր արել:

Պատշգամբի բազրիքին կռթնած Շամամը յանկարծ ձգաց.

- Մօրս պատմութիւնն է... Մերս էր պատմում իր երեխայ օրերից... «Ժանտախտն, - ասում էր, - գիւղ էր մտնում երկու ձիւղոր առաջը գցած»:

- Մէկը՝ ոտից գլուխ կարմիր հագած ու կարմիր գաւազանով, - յուշեց ծերունին:

- Միւսը՝ սեւ հագած ու սեւ գաւազանով, եւ շարունակեց Շամամը: - Եթէ դրանը սեւ գաւազանն էր դիպում՝ սեւ նշան էր նկարում: Դա մահ էր:

- Ձեր դրանը կարմիր գաւազան էր դիպել: Որովհետեւ երբ մորեխ էր մտնում երկիր, դուք թաս ու կճուճ առած վազում էիք Յակոբի եկեղեցի, լցնում էիք ձեր ամանները նրա մօտի աղբրաջրով ու էլի շտապում դաշտավայր՝ ձեզ հետ բերելով վարդագոյն, սպիտակաթիկունք տարմահաւքին...

- Բայ... տատս էր պատմում,

- ապշել էր Շամամը:

- Ինչ հրաշք ծաղիկներ կային ճանապարհին ու սուրբ լերան ստորոտին: Յակոբուկ, Աչքածաղիկ, Թանթոնիկ, Համասպրամ, Մարեմծաղիկ, Արեան խոտ ու կուսահալած... Յիշու՞մ ես, հենց մօտենում էիր՝ արիւն էր ցայտում կուսահալածը: Դա նշան էր, որ կոյս է մօտեցողը, բերած ջուրը շաղ էիք տալիս արտերի, այգիների վրայ, ու ձեզ հետ եկած հաւքերը սկսում էին մորեխների կոտորածը: Նրանց կտուցներն արիւնտուում էին, արիւնը լերգանում, դառնում էր շրեշ, ու դուք առունները լցնում էիք ջրով, թասերով ջուր էիք դնում արտերի, այգիների մէջ, որ սարեակները լուսնան իրենց կտուցները:

- Տա՛տս էր պատմում, - հագիւ շշուջաց Շամամը, ու Աւետիքին թուաց, թէ կինը գերյուզմունքի այս պահին հիմա-հիմա կը ծնկի ծերունու առաջ:

- Ես ձեր յիշողութիւնն եմ, - ասաց ծերունին ու լաւաշի վերջին պատառով այնպէս մաքրեց ափսեն, ասես ինքը չէ, քաղցած կատուն էր լպստել մածնամանը:

- Երկնքից երեք խնձոր ընկան, - Շամամին ուշքի բերելու համար ասաց Աւետիքը ու չհասցրեց բաժանել խնձորները, մածնաթանը կարծես ակնթարթային ազդեցութեան քնադղել լինէր՝ կողքի ընկած ծերունին արդէն քնած էր: Շորերը հանելով, Աւետիքը գոլ ջրով դոյլերը տարաւ դէպի ստիւի մարգերը՝ ծոծրակին զգալով Շամամի այրող հայեացքը: - Շոր գցիր մեր յիշողութեան վրայ, - տեղ հասնելով ասաց նա, - թէ չէ՛ կը մրսի, իսկ մրսած յիշողութ-

Շարք էք 23

Չեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 Email:massis2@earthlink.net

«ՐԱՅՈՐԴԱՅ» ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ



Հայց. Առաք. Սբ. Եկեղեցուց Արեւմտեան Ամերիկայի Առաջնորդարանն ու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը միասնաբար հրաւիրած են Երեւանի «Հայորդաց» տաղանդաւոր պատանիներու խումբը որ իր ելոյթներով մեզ հաղորդակից դարձնէ մշակութային հարուստ ժառանգին:

60 պատանիներէ բաղկացած այս խումբը որու կեդրոնը Երեւանի Նորք թաղամասն է կը վայելէ բարձր հովանաւորութիւնը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի: Կատարողական արուեստին մէջ մրցանակ շահած այս խումբին մաս կը կազմեն Հայկազունք ժողովրդային Անսամպլը, Նարեկ Պարախումբը, Նորք Կրկէան ու Վահագն թմբկահարները:

«Հայորդաց» պատանիներու խումբին այս երկրորդ շրջապատոյնն է Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ: Երկու տարի առաջ անոնք իրենց ելոյթներով հմայած էին Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի շատ մը հայահոտ քաղաքներու մշակութասէր հասարակութիւնը:

Թորոնթոյն Սեդա Գանտա-հարեան հետեւեալ ձեռով արտայայտուած էր անոնց ելոյթի մասին: «Լեկ-լեցուն սրահ մէկ սիրտ եւ մէկ ականջ էր դարձած: Փոքրիկ պարման-պարմանուհիները ոչ միայն կ'երգէին ու կը պարէին, այլեւ կը տիրապետէին ամբողջ բեմն ու դահլիճը: Կը հոսէր պարա-

յին ուրիշ տահուներէն, կը շողային տարազներու գոյները կարծես հայոց դաշտերէն»:

«Հայորդաց» խումբի տաղանդաւոր պատանիներու ելոյթը՝ երգի, պարի, նուազի, ասմունքի եւ կրկնային արուեստի համոյթ մըն է որ մեծապէս կը տպաւորէ խտապահանջ հանդիսատեան անգամ՝ որ անկասկած պիտի խանդավառուի ու գոհունակ սրտով բաժնուի սրահէն: Եկէք եւ ականատես դարձէք այս անզուգական ելոյթին:

«Հայորդաց»ի ելոյթները տեղի պիտի ունենան Հ.Բ.Ը. Միութեան Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի սրահը՝ Նոյեմբեր 8-ին եւ 9-ին, Հ.Բ.Ը. Միութեան Փասատինայի Ալեքս Մանուկեան կեդրոնի սրահը՝ Նոյեմբեր 10, 11, 15, 17 եւ 18-ին, իսկ Պըրպէնքի Արեւմտեան Ամերիկայի Առաջնորդարանի սրահին մէջ՝ Նոյեմբեր 16-ին:

Դպրոցական աշակերտներու համար գեղջեալ գինով ելոյթները տեղի պիտի ունենան Նոյեմբեր 8, կէսօրէ ետք ժամը 4:00ին՝ Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի սրահը եւ Նոյեմբեր 15, կէսօրէ ետք ժամը 4:00ին՝ Հ.Բ.Ը.Մ.ի Փասատինայի Ալեքս Մանուկեան կեդրոնի սրահը:

Տոմսերու համար կարելի է դիմել Հ.Բ.Ը. Միութեան Փասատինայի կեդրոնի գրասենեակը (626) 794-7942 եւ Հ.Բ.Ը. Միութեան Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի գրասենեակը (818) 883-2428:

ԱՆՈՒԲԱԿԱՆ ԱՐԱՎԱՍԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ

Շարունակուած էջ 5-էն

աղմուկը ուրիշ տահուներէն կը պատճառէր, սակայն երիտասարդին կատարումները այնքան յաջող էին որ ինք արժանացաւ խանդավառ ծափահարութեանց: Շարունակելով յայտագրի գեղարուեստական բաժինը, գեղեցիկ պարային կատարումներ ունեցան Սարտարապատ խմբի շնորհալի աղջիկներն ու տղաքը, քանի մը յաջող պարեր ներկայացնելով:

Հանդիսավար Արա Ակիշեանի բացման խօսքէն ետք, յայտագրի վրայ ելոյթներ ունեցան ֆոնտի քարտուղար Ռոնըլտ Նագելլի, Հայաստանէն՝ Տիար Բագրատ Եսայեան, ֆոնտի հիմնադիր նախագահ Անուշաւան Աբրահամեան եւ վերջաւորութեան, ձեռնարկի հովանաւոր Յովնան Արք. Տէրտէրեան: Երկար, մանրամասն եւ հետաքրքրական գեկուցում մըն էր Ռոնըլտի «Power Point» սահիկներով ֆոնտի գործունէութեան մասին տրուած սպառիչ տեղեկութիւնները, որոնք մեծապէս գնահատուեցան: Նոյնպէս նախարարութեան տեղակալ, Բագրատ Եսայեանի գեկուցը, ֆոնտի եւ կառավարութեան հետ գործակցութեան մասին, արժանացաւ լուրջ ուշադրութեան: Ի վերջոյ,

խօսքը տրուեցաւ ֆոնտի հիմնադիր-նախագահ Անուշաւան Աբրահամեանին, որ խիստ պարզ, անկեղծ եւ զոյգ լեզուներով ներկաներուն բացատրեց ֆոնտի ստեղծման պատճառները, որպէսզի «ապագան երիտասարդութեան ապահովուի կրթութեամբ»: Նախագահը վարչութեան անդամներէն իւրաքանչիւրին նուիրեց «շնորհակալութիւն» բառը կրող յուշանուէրներ, քանի որ բոլորն ալ կամաւոր նուիրեալներն էին ֆոնտին:

Երեկոյն պիտի աւարտէր Առաջնորդ Սրբազանին գնահատական խօսքերով եւ «Պահպանիչ»ով:

Արդարեւ խիստ շահեկան եւ հետաքրքրական ձեռնարկ մըն էր այս, որու ընթացքին ներկաները լաւատեղեակ եղան ֆոնտի գործունէութեան Հայաստանի 11 մարզերէն ներս, յազեցած ծրագրերով Հայաստանի արհեստագործական ուսումնարաններու եւ քոլէճներու համար: Գործնական, շօշափելի հայրենասիրութեան լաւագոյն նմոյշ մըն էր Ա. Ա. կրթական ֆոնտը, որուն համար մեր անկեղծ շնորհաւորութիւնները հիմնադիր Տէր եւ Տիկ. Աբրահամեաններուն եւ իրենց բոլոր գործակիցներուն Լոս Անձե-լոսէն միինչեւ Հայաստան:

Վարձքերնին կատար

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԻՍՈՆ ԴԻՄՆԱԴՐԱՍ

Շարունակուած էջ 17-էն

րուն առնչուող միջազգային գիտա-ժողովներու ուղիղ հեռարձակմանը:

Նոյն ընդունելութեան ընթացքին Միջազգային հարցերու գծով փոխ-Փրովոսթ եւ Միջազգային Ինսթիթուտի (որի բաղկացուցիչ մասն է ՀՈՒՄ-ը) տնօրէն Փրոֆ. Մարք Թեյլըրը ներկայացուց Ինսթիթուտի աշխատանքները եւ ՀՈՒՄ-ի ու միւս կեդրոններու սերտ համագործակցութիւնը: Փրոֆ. Թեյլըրը աւելի մանրամասնօրէն ներկայացուց Փրոֆ. Պարտաքճեանի նուաճումները եւ նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց Պարտաքճեանին՝ իր ծառայութեան համար:

Համալսարանի Տիրպորն մասնաճիւղի Տեքսն Գաթրին Էնտըր-սըն-Լեւիթը խօսեցաւ Տիրպորնի Հայագիտական Հետազոտութիւններու կեդրոնի մասին եւ ներկայացուց կեդրոնի նոր տնօրէն Փրոֆ. Արա Սանճեանին: Տեքսն Էնտըրսըն-Լե-

ւիթը քննարկեց այն սերտ համագործակցութիւնը, որ ստեղծուած է էին Արպըրի եւ Տիրպորնի Հայագիտական երկու ծրագրերուն միջեւ:

Ընդունելութեանը ներկայ էին մօտ 50 հիւրեր, որոնց կարգին՝ Համալսարանի փոխնախագահ Սինթիա Ուիլյեմսը, Պատմութեան Բաժանմունքի վարիչ Մէրի Բելլին, Մերձաւոր Արեւելքի Ուսումնասիրութիւններու Բաժանմունքի վարիչ Մայքլ Պոնները, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի Ուսումնասիրութիւններու կեդրոնի տնօրէն Մայքլ Քեննետին, Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկէի Ուսումնասիրութիւններու կեդրոնի տնօրէն Գաթրին Հակընը, հասարակական եւ հումանիթար գիտութիւններու այլ դասախօսներ, ՄՀ-ի Հայ Ուսանողներու Մշակութային Ընկերութեան նախագահ Ճեսսիքա Ստամբուլեանը, աւարտական ծրագրի ուսանողներ, ծրագրին օժանդակողներ եւ համայնքի անդամներ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:----- Country: -----

 Tel :----- Fax : -----

Massis Weekly on the Internet
www.massisweekly.com
 Updated every Friday

 **Merrill Lynch**
 INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
 Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
 225 So. Lake Avenue
 Pasadena, CA 91101
 (626) 396-2825 Direct
 (626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

"Helping the Armenian Community Build Wealth"

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

*Բեղմնաւոր Անցեալ
Proud Past*



*Լուսաշող Ապագայ
Exciting Future*



**The Western Diocese of the Armenian Church of North America
The Armenian General Benevolent Union
Present**



**The Second
North American tour
of the award-winning
performing arts troupe of
the Nork Children's Center,
the "HAYORTATS".**



**One-of-a kind tour de force, coined as the
"Armenian Cirque Du Soleil"
Unparalleled talent, spirit and vitality,
the troupe of over 60 young and dynamic
performers will delight and entertain with a
mix of traditional Armenian and contemporary
art forms; song, dance, instrumental music,
dramatic recitation as well as skillful and thrilling gymnastics and aerobatics**



**"HAYORTATS"
PERFORMANCE SCHEDULE**

THURSDAY, NOVEMBER 8, 2007
AGBU MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
6844 OAKDALE AVENUE, CANOGA PARK
STUDENT PERFORMANCE
4:00 PM, \$12.00

FRIDAY, NOVEMBER 9, 2007
AGBU MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
6844 OAKDALE AVENUE, CANOGA PARK
8:00 PM, \$30.00

SATURDAY, NOVEMBER 10, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
8:00 PM, \$30.00

SUNDAY, NOVEMBER 11, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
GALA PERFORMANCE
5:00 PM, \$100.00

THURSDAY, NOVEMBER 15, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
STUDENT PERFORMANCE
4:00 PM, \$12.00

FRIDAY, NOVEMBER 16, 2007
WESTERN DIOCESE ARMENIAN CHURCH
3325 N. GLENOAKS BLVD., BURBANK
8:00 PM, \$30.00

SATURDAY, NOVEMBER 17, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
8:00 PM, \$30.00

SUNDAY, NOVEMBER 18, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
5:00 PM, \$30.00

FOR INFORMATION & TICKETS

CONTACT THE AGBU OFFICES AGBU MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
626.794.7942 818.883.2428

ՄԱՐՁԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտպոլի առաջնութեան 26-րդ հանգրուաններու մրցումներուն արդիւնքները

Հոկտեմբեր 26	
Գանձասար - Փիւնիկ	0-0
Բանանց - Արարատ	2-0
Միկա - Ուլիս	0-0
Կիլիկիա Շիրակ	1-3



Հոկտեմբեր 29	
Փիւնիկ - Միկա	1-0

Խումբերու դասաւորումը

	Խաղ	Ցաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոլ	Միակոր
1. Փիւնիկ	25	16	3	6	52-19	51
2. Բանանց	25	15	4	6	48-22	49
3. Արարատ	25	15	3	7	45-34	48
4. Միկա	25	11	8	6	38-23	41
5. Գանձասար	26	10	6	10	32-28	36
6. Շիրակ	26	8	7	11	25-36	31
7. Ուլիս	26	7	5	14	18-44	26
8. Կիլիկիա	26	1	2	23	10-62	5

ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Շիրակացու ընդացող բռնցքամարտի աշխարհի առաջնութեանը Հայաստանի հաւաքականի մարզիկները շարունակում են իրենց ելուցները եւ 57 կգ քաշային Ազատ Յովհաննիսեանը 1-ին փուլը յաջողութեան յաղթահարելուց չեսոյ 40:20 հաշւով ջախջախել է մոնղոլացի Ջորգբատար էկզորիզին: 1/8-րդ եզրափակիչում Յովհաննիսեանի մրցակիցը կլինի ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ուիլյամսը:



60կգ քաշայինների պայքարում Հրաչիկ Զավախեանը լատվիացի Ալվարս Ռոմանովսկիսին յաղթելուց չեսոյ 17:14 հաշւով պարտութեան է մատնել ԱՄՆ-ի ներկայացուցիչ Սադամ Ալիին: Յաջող է հանդէս գալիս նաեւ 64կգ քաշային էդուարդ Համբարձումեանը, որը արդէն 2 յաղթանակ է տարել եւ դուրս եկել 1/8-րդ եզրափակիչ:

Իսկ ահա 75 կգ քաշային Անդրանիկ Յակոբեանը 2-րդ փուլում 20:22 հաշւով զիջել է իռլանդացի Դարեն Սուզեյանդին եւ դուրս մնացել չեսոպայ պայքարից: Եւ վերջապէս 81 կգ քաշային Յովակ Անանիկեանը 23:13 հաշւով պարտութեան է մատնել թուրք Բագրամ Մուզահերին:

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

Հիպնոսարուծութեան երկու կեդրոններ
ղեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի

Փասատինայի մէջ՝
Երեւնաբքի, Հինգշաբթի եւ Շաբաթ
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104

Կլէնտէյլի մէջ՝
Երկուշաբթի, Զորեքշաբթի եւ Ուրբաթ
Հասցէ՝ 450 North Brand Blvd. Suite 600
Glendale CA 91203
Հեռախօս (818) 434-8118
միայն ժամադրութեամբ
Առաւօտեան ժամը 10-էն, կ.ե. ժամը 3

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ
Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա
առաքեցէք հետեւեալ հասցեով:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտպոլի առաջնութեան 11-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ռիտինկ - Նիքէտըլ	2-1	Տերսի Բաունթի - Էվըրթըն	0-2
Պըրմինկեմ - Ուիկան Աթլ.	3-2	Փորթսմութ - Ուէսթ Յամ	0-0
Սանտըրլէնտ - Ֆուլհամ	1-1	Պոլթըն - Ասթըն Վիլլա	1-1
Մանչեսթըր Եուն. - Միտլըզպորո	4-1	Թոթեմհամ - Պլէքպըրն	1-2
Չելսի - Մանչեսթըր Ս.	6-0	Լիվըրպոլ - Արսենալ	1-1

Առաջատար խումբերու դասաւորումը						
Արսենալ	10	8	2	0	22-7	26
Մանչեսթըր Եուն.	11	8	2	1	19-4	26
Մանչեսթըր Սիթի	11	7	1	3	15-13	22
Չելսի	11	6	3	2	16-8	21
Պլէքպըրն	10	6	3	1	15-9	21
Լիվըրպոլ	10	5	5	0	17-6	20
Փորթսմութ	11	5	4	2	19-12	19

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտպոլի առաջնութեան 11-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Այնք. Ֆրանքֆորթ - Յանովըր-96	0-0	Վոլսպուրկ - Նիւրնպըրկ	3-1
Արմ. Պիլըֆելտ - Քոթայիս	1-1	Ռոսթըք - Քարլսրուհէ	0-0
Շուքկարթ - Պ. Լիվըրքուզըն	1-0	Տորթնուտ - Պ. Միւնխի	0-0
Շալքէ-04 - Վարտըր Պրէյմըն	1-1	Յերթա Պերլին - ՎՅԼ Պոխտըմ	2-0
Տուիզպուրկ - Յամպուրկ	0-1		

Առաջատար խումբերու դասաւորումը						
Պայերն Միւնխի	11	8	3	0	27-4	27
Յամպուրկ	11	7	2	2	17-8	23
Վարտըր Պրէյմըն	11	6	3	2	25-17	21
Քարլսրուհէ	11	6	2	3	13-11	20
Շալքէ-04	11	4	6	1	17-10	18
Յանովըր-96	11	5	3	3	15-15	18
Վոլսպուրկ	11	4	4	3	18-16	16

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Փալերմո - Ինթեր Միլան	0-0	Թորինո - Քալիարի	2-0
Էմպոլի - Աթալանթա	0-1	Քաթանիա - Սամտորիա	2-0
Ա. Սէ. Միլան - Ա. Ես. Ռոմա	0-1	Փարմա - Լիվորնո	3-2
Սիենա - Ռեճինա	0-0	Ճենովա - Ֆիորենթինա	0-0
Լացիո - Ուտինէզէ	0-1	Նապոլի - Եուվենթուս	3-1

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ինթեր Միլան	9	6	3	0	17-5	21
Ա. Ես. Ռոմա	9	5	3	1	20-12	18
Ֆիորենթինա	9	4	5	0	16-7	17
Եուվենթուս	9	5	2	2	18-10	17
Ուտինէզէ	9	4	3	2	10-11	15
Նապոլի	9	4	2	3	17-11	14
Աթալանթա	9	3	5	1	11-10	14

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտպոլի առաջնութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մայորքա - Եսպանիոլ	2-2	Սարակոսա - Վիլլառէալ	4-1
Լեվանթ - Աթլէթ. Մատրիտ	0-1	Ռէալ Մատրիտ - Տեփ. Քորունա	3-1
Ռասինկ - Կեթաֆէ	2-0	Օսասունա - Ռէալ Վալաստիլիտ	2-2
Ռէալ Մուրսիա - Յուլէպա	1-0	Աթլէթ. Պիլաո - Ռէալ Պաթիս	2-0
Սելիլլա - Վալենսիա	3-0	Պարսելոնա - Ալմերիա	2-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ռէալ Մատրիտ	9	7	1	1	20-6	22
Պարսելոնա	9	6	2	1	20-7	20
Վիլլառէալ	9	6	0	3	15-12	18
Վալենսիա	9	6	0	3	14-14	18
Եսպանիոլ	9	5	2	2	14-11	17
Աթլէթ. Մատրիտ	9	5	2	2	16-7	17
Մայորքա	9	4	3	2	17-12	15

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտպոլի առաջնութեան 12-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մէթց - Նանսի	0-0	Մոնպօ - Քան	0-0
Սէնթ Էթիէն - Օքսել	0-0	Լը Մանս - Թուլուզ	1-1
Լորիան - Նիս	0-0	Լիլ - Սթրասպուրկ	0-3
Պորտո - Վալանսիէ	2-1	Լանս - Րընէ	1-2
Փարիզ Սէն ժերմէն - Լիոն	2-3	Մոշօ - Մարսէլ	2-1

Առաջատար խումբերու դասաւորումը						
Լիոն	12	9	1	2	27-12	28
Նանսի	11	7	3	1	19-7	24
Րընէ	12	7	3	2	17-9	24
Պորտո	12	6	4	2	16-11	22
Լը Մանս	12	6	2	4	16-15	20
Սթրասպուրկ	12	5	4	3	14-8	21
Նիս	12	5	3	4	13-10	18

ԵՍ ՁԵՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆ ԵՍ

Շարունակում էք 19-էն

եամբ ո՞նց ենք ապրելու:

- Ձեռ մի առ, - վախեցաւ, թէ՞ պատկառեց Շամամը: - Մի սխալ բան ասե՞ց մարդը:

- Ծիրանի չրով ճաշ կեանքումս ե՞մ կերել:

- Չասե՞ց՝ կորցրել ես յիշողութիւնդ: Կորցրած չլինէիր՝ կը յիշէիր տարիքդ, փսլինքդ չէր թափի ամէն լրբի առաջ... - Էծերդ եկա՞ն, - Աւետիքը դուրսի պարունակութիւնը շուռ տուեց գլխին, փնչացրեց, - մարդկանց մօտ էլ լեզուիդ տիրութիւն չես անում:

- Արի քեզ պսակեմ Արուսի հետ: Բախտաւոր կը լինէք: Նա իր լեզուին տիրութիւն անում է: Մեծակ լեզուի՞ն... - Աղջի, ամօթ է, հանգիստ թող խեղճին:

- Ինչի՞նչ է խեղճ, - պատշգամբից ցած իջաւ, ձեռքերը կոնքերին կանթ սարքեց Շամամը:

- Քո մարդը մեռնե՞ր՝ դու էլ խեղճ կը լինէիր, - երկրորդ դուրսի ջրի տակից բլրբլրացրեց Աւետիքը:

- Քեզ երեխի պէս խնամում եմ, որ երկար ապրես: Թող նա էլ խնամէր:

- Հիմա մեղաւոր է, որ մարդը մեռաւ: - Հա, մեղաւոր է, - հաստատեց Շամամը, լուացքի պարանից պոկեց ցամքոցը, շարտեց Աւետիքի երեսին: - Մարդու կեանքը կնոջ ձեռքում է: Երբ ուզենայ՝ կը սպանի:

- Չլինի՞ թէ ժամս հասել է, - ասաց Աւետիքը: - Էս մեր յիշողութեան ախպերն էլ, ուրեմն, Գաբրիէլն է ու եկել է քո կանչով: Էդպէս էլ ասէք, թէ չէ՞՝ սարեակ, կարմիր ու սև գաւազաններ, կուսահալած... Շատ վախեցանք... Անկողինս դուրսը գցիր՝ շոգ է:

- Թախտոգ զբաղուած է: - Մեր տանն է քնելո՞ւ: - Տանտէրը դու ես, դու էլ վռնդիր:

Ծեծուած շան նման Աւետիքը տուն մտաւ, վերմակը քաշեց գլխին: Տնային կալանքի նման մի բան էր ստացուել: Շամամի ծոցից ո՞նց էր դուրս պրծնելու, որ հաշուէր քառասունուեց քայլը:

Քունը չէր տանում, քունքերը թմբկահարուած էին, շնչահեղձ էր լինում, բայց դուրս չէր գալիս վերմակի տակից: «Խեղդուեմ՝ պրծնեմ, խեղդուեմ՝ պրծնեմ այս մուրտառ կեանքից, - մտածում էր նա: Հայճոյանքի աղերը մինչեւ վերջ ձգելով, նա նետը հասցրեց մինչեւ Յիսուս Քրիստոս ու Քրիստոսի վարդապետութիւն: - Դու որ տղամարդ չես եղել, թոյլ ես եղել, տկար, անուժ, ինչո՞ւ ես քո մեծ այդ արատը դարձրել վարդապետութեան մեխ: Բնութիւնն ինձ ցանկացող է ծնել՝ ուժեղ, առողջ, դու ինչո՞ւ ես կապտուել իմ ամէն ինչը քո պատուիրաններով: Քեզնից յետոյ ծնուած վարդապետութիւնը տես թէ ինչ տարածում ունեցաւ: Այդ վարդապետութեամբ տես թէ ոնց հզօրացան հարեւան ազգերը: Ողորմելի մի սուլթան 900 երեխայ ունեցաւ: Գլուխը քարը՝ 900-ը, բայց ամէն մէկս հարիւր յիսունը թէ ունենայինք՝ վա՞տ կը լինէր... Մի բան հաստատ գիտեմ, որ արատ ունեցող մարդու վարդապետութիւնը նոյնպէս արատաւոր կը լինի... Հենց լեզուդ ես երկարացրել, - Քրիստոսին թող-

նելով, Շամամին դարձաւ Աւետիքը, - ցերեկով խօսում ես հերիք չի, անկողինն էլ ես դարձրել ժողովարան: Խօսքով երեխայ կը ծնուի... էլի փառք Աստուծոն, որ մեր ժողովներից երկուսը ծնուեցին... Մէկն ինձ է փոխարինելու, միւսը՝ քեզ: Աշխարհին պարտք չենք: Տուածը վերադարձրել ենք: Մէկով մէկ: Մաքուր հաշիւ: Համեստ հաշիւ: Մենք համեստ ժողովուրդ ենք: Փառք, փառք...»:

Այլեւս անհնար էր դիմանալ. դժոխքից ճողոպրածի նման, Աւետիքը մի կողմ շարտեց վերմակը, հենց տակի շորերով ու ոտաբոբիկ վագ տուեց պատշգամբ: Քրտինքի կաթիլները, որ խուտուտում էին ողջ մարմինը, իսկոյն սառեցին, քարացան՝ քսուելով գիշերուայ գովին:

- Թան եմ ուզում, - բղաւեց Աւետիքը եւ զգաց, թէ ոնց փշփշուտուեց մաշկը: Կարծես դատարկ կարասի մէջ գոռաց:

Շամամը չէր երեւում: Թախտն էլ դատարկ էր: Ծերունու տոպրակն էլ չկար: Մի պահ Աւետիքն ուրախացած մտածեց՝ երազ է, նոյնիսկ ծիծաղեց երազի մէջ ծիլ տուող այն կասկածի վրայ, թէ Շամամին փախցրել է ծերուկը՝ կնոջ ծպտեալ սիրեկանը: Թէ-կուզեւ երազի մէջ, ինչ անտանելի ցաւ է կորստի ցաւը... Եթէ Շամամը յայտնուէր, Աւետիքը թեւեւ ծնկի գար նրա առջեւ ու ներում խնդրեր՝ երբեմն-երբեմն մտքով ու մարմնով կորչելու համար: Բայց Շամամը չկար, իսկ երազը ձգուած էր իրականութիւն դառնալու չափ... Նա կնոջը փնտրեց ամէնուր, նոյնիսկ ջրհորը պիտի մտնէր, եթէ քաղաքաբնակ թոռան խաղալիքների արկղում չյայտնաբերէր փայտեայ գոլաները:

«Նա գնաց մեր յիշողութեան ետեւից», - մտածեց Աւետիքը, եւ սա նրա համար աւելի անհաւանական ու սարսափելի միտք էր, քան եթէ կնոջը փախցրած լինէր ծպտեալ սիրեկանը...

Շամամը յայտնուեց երկու օր անց՝ ջրով լի մի կճուճ բարուրի պէս գրկած: Ծրջապատին անհաղորդ, նա ձեռքը խոթում էր կճուճը, ջրջնում էր հողը: Սերմնացանի նման: Աղօթքի հանգով՝ հազիւ նկատելի շարժում էին նրա գունատ շրթները, իսկ հայեացքն անվերջ երկինք էր յառուած: Միայն Աւետիքին ճանաչեց. ժպտաց, մօտենալով շշնջաց ականջին.

- Հիմա սարսափելի չէ ոչ մտրեխը եւ ոչ էլ ժանտախտը: Նա մեզ փրկեց...

Նրան բերող սահմանապահներից մէկը, որ հաւանաբար բժիշկ էր, Աւետիքին խորհուրդ տուեց առանձնապէս չանհանգստանալ, որովհետեւ արտակարգ ոչինչ չէր պատահել: «Այդ տարիքի կանանց մօտ հազուադէպ չեն նման խանգարումները», - ասաց նա եւ էլի խորհուրդներ էր տալիս, չնկատելով, որ Աւետիքը նրան չի լսում այլեւս: Անզսպելի մղուժով Աւետիքն ուզում էր գիրկն առնել կնոջը, ճգմել այնպէս, որ ցաւից ոռնալով՝ նրա միջից փախչէին դեւերը, բայց եւ չէր կարողանում ազատուել այն մտքից, թէ երկինքը լցուած է վարդագոյն, սպիտակաթիկունք սարեակների ճուռողիւնով, իսկ ինքն, ահա, կոյր է, խուլ: Կոյր ու խուլ էին նաեւ սահմանապահները, հարեւանները, որբեւայրի Արուսը, որ հեկեկում էր երեխայի պէս...

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Փաստորինայի մէջ փոքր խանութ մը վարձու է Washington պողոտայի վրայ: Հասցէն է՝ 1527 Washington Blvd, Pasadena: Մանրամասնութիւններու համար հեռաձայնել Աւոյին՝ (626) 794-5318 թիւին:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՅԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

Հայ Թելեժամը կը վերադառնայ 18ը Ալիքի Վրայ Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 ժամերը

Շարաքը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18 Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day 7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

UNITED STATES POSTAL SERVICE Statement of Ownership, Management, and Circulation (All Periodicals Publications Except Requester Publications)

1. Publication Title Masis Weekly	2. Publication Number 0 6 6 7 - 3 1 0	3. Filing Date 10-30-07
4. Issue Frequency Weekly, except two weeks in August	5. Number of Issues Published Annually 50	6. Annual Subscription Price \$ 50.00
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®) 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104		Contact Person Telephone (include area code) (626) 797-7680

8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer)
1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)

Publisher (Name and complete mailing address)
SDHP - 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

Editor (Name and complete mailing address)
Dr Arshag Kazanjian - 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

Managing Editor (Name and complete mailing address)
Vabe Arshagian - 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

a. Total Number of Copies (Net press run)		3,500	3,500
b. Paid Circulation (By Mail and Outside the Mail)	(1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)	123	123
	(2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)	383	383
	(3) Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS®	2400	2400
	(4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®)	66	66
c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4))		2,972	2,972
c. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15c (1), (2), (3), and (4))	(1) Free or Nominal Rate Outside-County Copies Included on PS Form 3541	40	40
	(2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541	35	35
	(3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail)		
	(4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means)	300	300
e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15c (1), (2), (3) and (4))		375	375
f. Total Distribution (Sum of 15c and 15e)		3,347	3,347
g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3))		153	153
h. Total (Sum of 15f and g)		3,500	3,500
i. Percent Paid (15c divided by 15f times 100)		88.75%	88.75%

16. Publication of Statement of Ownership
 If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the Nov. 3, 2007 issue of this publication. Publication not required.

**ՍՈՑԻԱԼ ԳԵՄՈՎՐԱՏ
ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**

**120
ԱՄԵԱԿԻ**



ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կապակերպությամբ՝

Ս.Գ.Կ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի

Օրումն Գլխաւոր Բանախօս՝

Լիւտմիլա Սարգսեան

Հայաստանի ՄԴՀԿ-ի Ատենապետ

Գեղարուեստական ձոխ Յայտագիր

Գեղարուեստական Ղեկավար՝

Խմբավար՝ Միքայէլ Աւետիսեան

Կը Մասնակցին՝

Ատիս Հարմանեան Գագիկ Պատալեան

Սամուէլ Վարդանեան

Վարդան Եւ Սիրակունջ Գէորգեան Պարայիս Համույթ

Տեղի կ'ունենայ

Կիրակի, Նոյեմբեր 4, 2007

երեկոյեան ժամը 6:00-ին

Glendale High School-ի սրահին մէջ

1440 East Broadway, Glendale, CA 91205

Մուտքը՝ Ազատ